














ԲԱՆԱԲԵՐ

Հոգեւոր Աստաթոր Ամենուհի
“PAN PÈRE”
 REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE
 ORGANE DES ÉGLISES ÉVANGÉLIQUES ARMÉNIENNES DE FRANCE

Rédaction et Administration :
 7, Rue Papère — MARSEILLE

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԺԳ. Տարի - ՆՈՅԵՄԲԵՐ 1937 13^{me} Année - Novembre 1937

Խմբագրական

Բարեպաշտ շրթներ

Յ. Ն. Ղ.

Հոգ. Կեանք

Իմ որդի Տիմոթէոս

Յիսուսի Աստուածութեան լեցունութիւնը

Անթերի անձնութիւն

Մ. Վէրիլեան

Վ. Գ. Մուճեան

Կենաց ամուսներէն

Տուտու

Վեր. Dr. P. BEHRON

Սերտողութիւն

Սուրբ Հոգի

Երջանիկ յոյսը

Ահա ես շուտով կուգամ

Պատմական

Մեծ դէմքեր եւ դէպքեր...

Գ. Գ. Խաչիկեան

Պատանեաց

Աղքատ եղու Ան որ հարուստ էր

Զանգարան լուրեր

«Այո»

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը Թէեւ ֆրանսահայ Ասեւարանա-
կան եկեղեցիներու պաշտօնականներն է, այսու ամենայնիւ,
նպատակ ունի ծառայելու ամենուն, որոնք ճշմարտութիւնը
կը փնտռեն եւ ծարար կըլլան Աստուծոյ խօսքին անխարդախ
վկայութեան: Քանի որ Քրիստոս չեկաւ միայն կարգ մը
անհատներու համար, այլ ամենուն, բնակիչ ճշմարիտ թափառիչ
ներկայացուցիչն ալ չճանչնար ո եւ է յարանաւանութիւն մը,
հապա մէկ է անոնց հետ, որոնք Քրիստոսի մէջ իրեն կը
միանան: ԲԱՆԲԵՐ կ'ուզէ ծառայել անոնց:

ԲԱՆԲԵՐ հոգեւոր ամսաթերթը երկու լեզուներով կը հրատարակուի Հայերէն եւ Թուրքերէն: Երկուքն ալ
կը տպուին Մարտէյի մէջ: Հայերէնը ունի 16 էջ (կողքէն դուրս), որուն խմբագրական մարմինն է,
Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Բրօֆ. Գ. Գ. ԽԱՅԻԿԵԱՆ, Պատք. Ս. ՊԱԳԳԱԼԵԱՆ, Վ. ՍԱՀԱԿԵԱՆ
Թուրքերէնը ունի 8 էջ ո'չ թէ հայերէնին թարգմանութիւնը այլ տարբեր բովանդակութեամբ: Այս պարագան
գիւրութիւն կուտայ որ Թուրքերէն գիտցող մը անկէ ալ կրնայ օգտուիլ: Թուրքերէն մասի պատասխա-
նատու խմբագիրն է՝

ԺՕԶԷՅ Կ. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ

18, Rue du Docteur Rebattel — LYON (France)

որու զրկուելու են նաեւ բոլոր Թուրքերէն յօդուածները:

ԲԱՆԲԵՐԻ համար յօդուած կրնան գրել անոնք միայն, որոնք
գիտեն վերստին ծնունդն ու հոգեւոր կեանքը եւ անոր մէջ
ապրելու ամենօրեայ ուրախութիւնը կը վայելեն Քրիստոսով:

ԲԱՆԲԵՐԻ բաժանորդագրութիւնը տարեկան է կանխիկ

— ԲԱԺՆԵԳԻՆՆ Է —

ՀԱՅԵՐԷՆԸ Ֆրանսա 20 Սուրիա 15 Ֆրանք
Արտասահման Տոլար 1. 25

ԹՈՒՐԳԵՐԷՆԸ Ֆրանսա 10 Սուրիա 7 Ֆրանք
Արտասահման 60 սէնթ

ՀԱՅԵՐԷՆ եւ **ԹՈՒՐԳԵՐԷՆ** միասին Ֆրանսա 25
Սուրիա 20 Ֆրանք եւ Արտասահման Տոլ. 1. 75
(Դիւրութեան համար travelers check, թղթադրամ
եւ ամերիկեան նամակադրօշմ կրնայ ղրկուիլ):

Թղթակցութիւններ եւ յօդուածներ ղրկուելու են
Պատ. ՎԱՀԱՆ ՍԱՀԱԿԵԱՆԻ իսկ դրամական առա-
քումներ Վեր. Յ. Ն. ՂԱԶԱՐՈՍԵԱՆԻ անունով, եր-
կուքն ալ հետեւեալ հասցէով.—

Réd. «PANPÈRE» c/o Rev. H. N. GHAZAROSSIAN


7, Rue Papère

MARSEILLE (France)

Մանտայով գրամական ուղաքումի տուժիւ հաճեցէք մ'անտային վրայ չմոռնալ գրելու
H. N. Ghazarossian, (Rédacteur) C. C. No. 182.53 Marseille

Արմենցի'ր դուն
որ կը քնանաս, եւ
կանգնէ մեռելնե-
րէն, ու Քրիստոս
քեզի լոյս պիտի
տայ:
Եփես. Լ. 14

ԲԱՆԲԵՐ



Ուրեմն ա'լ վախճանք, որ չլլայ թէ
Անոր Կանգիտող մտնելու խոստումնքէն որ մեզի մ'նացեր է,
ձեզմէ մէկը զրկուած գտնուի: Երբ. Դ. 1

Քանզի ալ աս-
կէ քիչ մը ատենէն
Ան որ գալու է'
պիտի գայ ու պի-
տի չուշանայ:

Երբ. Ժ. 37

ԺԳ. ՏԱՐԻ

ՆՈՅԵՄԲԵՐ 1957

ԹԻԻ 11



ԲԱՐԵՊԱՇՏ ՇՐԹՆԵՐ

Դիտե՛ք որ այսօր Տէրը քու տէրդ գլխէդ պիտի առնէ:

Դ. Թագ. Բ. 3

«Բարեբեր»ի անցեալ թիւին մէջ նկատի առինք
եկեղեցիին մէջ գտնուող «գիտողներ»ը, անա-
պաշխար գիտողներ, մանաւանդ հոգեւոր անունը
կրող գիտողներ:

Եկեղեցիի մը (տեղական եկեղեցի ըսել կ'ու-
զեմ) մէջ, ուր գիտողներ շատ կան, Աստուծոյ
գործը կ'սկսի կադալ, քանզի հոն գիտող մը բը-
նաւ հանգարտ չկրնար կենալ, միշտ գործունէ-
ութեան մէջ է եւ միշտ ալ բան մը կը տեսնէ
ու նաեւ կը ցուցնէ ուրիշներուն, անոնց ուշադ-
րութիւնը կեդրոնացնելով շատ անգամ անար-
ժէք եւ բոլորովին ջնջին խնդիրներու վրայ եւ
կ'ալիկոծէ բոլոր համայնքին միտքերն ու սըր-
տերը պղտորելով եւ ծանրաբեռնելով զանոնք իր
գիտողի սին տեսութիւններով: Ինչքա՛ն յաճախ
հանդիպեցանք ամենալստահելի եղբայրներու,
որոնք տխուր բեռնակիրներն եղան այդ գիտող
զաղափարավարներուն: Ինչքա՛ն յաճախ եկեղե-
ցիներն իսկ սին վիճարանութեանց թատերա-
վայրեր եղած են, քանզի ըսի ըսաւներ տուներու
շրջանակէն դուրս ելլելով եկեղեցիները լեցուցած
են եւ զանոնք բաժան բաժան ըրած:

Ո՛վ գիտողներ, ո՛ւր որ ալ ըլլաք, Յրանապի
կամ Ամերիկաներու մէջ, Սուրիոյ կամ Եգիպ-
տոսի եւ Յունաստանի մէջ, գիտցէք թէ ձեր բո-
լոր գործերուն համեմատ Աստուծոյ հատուցում
պիտի ընդունիք. ուրեմն քանի որ զեռ ժամանակ
կայ, ետ դարձէք ձեր կործանարար ճամբայէն
խոնարհութեամբ Տէրոջը եւ Անոր եկեղեցիին
ծառայեցէք ուղիղ սրտով:

Երանի՛ թէ ասանկներ իրենց աչքերը միայն
գործածէին եւ սակայն այնպէս չէ: Ժամերով

շրթներ եւ աւանջներ ալ կը լծուին այս
տխուր գործերուն ծառայելու, այն ալ հոգեւոր
շրջանակներու, հոգեւոր կոչուող ընտանեաց մէջ,
թունաւորելով նոյնիսկ չէզոք ունկնդիրներն ու
նաեւ խամբեցնելով մատաղ սրտերը իրենց հը-
րաբորբոք շունչովը: Ու ի՛նչ ալ յարմար, գեղե-
ցիկ բարեպաշտ հագուստ մը կը հագցուի Աս-
տուծոյ զգուանք առթող այդ խօսակցութեանց,
որոնց կը հետեւին սովորաբար խոնարհութեան
փարիսեցիական աղօթք մըն ալ փակելու ալդ
ժամը, քիչ վերջը նորէն սկսելու տարբեր տեղի
մը մէջ: Ու բարեպաշտ «ես»ը իր յաջողութեան
գինարբունքին մէջ կը լողայ:

Երեսունէ աւելի տարիներ հոգեւոր շրջանակ-
ներու մէջ շփում ունենալով այս բանը նկատած
ըլլալու համար է որ այս օր քանի մը բառե-
րով հոգեւորներու այս վէրքին վրայ ծանրացայ:
Գուցէ ոմանք մինչեւ այսօր նկատած չէին կամ
նոյնիսկ առաքինութիւն մը սեպած էին իրենց
համար ուրիշներու խնդիրներով զբաղելու: Հար-
կաւ շտկուելու է ասիկա գէթ անոնց մէջ որոնք
տգիտաբար ինկած են քննադատութեանց փոսին
մէջ, սակայն ո՛չ պակաս անոնց մէջ, որոնք գի-
տակցաբար կ'ընեն, խօսելով եւ դատելով, մի
գուցէ այդ միջոցով Աստուծոյ եկեղեցիին մէջ
քիչ մը աւելի աչքառու եւ ազդեցիկ դիրք մը
զրաւելու մարմաշնով:

Այս տողերը գրելու պահուս նամակ մը կ'ըն-
գունիմ հեռաւոր երկիր գտնուող պաշտօնակիցէ
մը, որ իր տեղին հոգեւոր գործերու մասին կը
պատմէ: Կը ներկայացնէ թէ ժողովուրդը
չորսի բաժնուած են մի միայն հոգեւորներու

մէջ տեղի ունեցող ըսի ըսաներուն պատճառաւ: Ասիկա ալ ախտ մըն է, որմէ եթէ հոգեւորներ չազատուին, շատ վնասներ կը քաշեն անոնք ինչպէս նաեւ Աստուծոյ գործը:

Ուրեմն երբ տեղ մը խօսակցութեան բռնութիւնք, երբ տեղ մը այցելութեան երթանք, ըզզոյշ ըլլանք ուրիշներուն խնդիրներով զբաղելու: Զանոնք ոչ թէ չվարկարեկենք, հապա աննպաստ խորհուրդներ իսկ չարտալայտենք անոնց մասին: Քաղի սկսուած խօսք մը ուրիշի մը կը տանի: Լուցկի մը երբ կը վառի, փչուելով զիւրաւ կը մարի: Բայց երբ կը դրուի վառող նիւթերու մէջ, մեծ հրդեհներու պատճառ կ'ըլլաւ այն. ու մենք կ'զգաստանանք այն ատեն երբ արդէն ամէն ինչ ուշ է:

Ի՞նչ ընենք այս պարագային:

Ա Տէրոջմով ուխտենք այս ախտէն ի սպառ ազատելու համար վերջին ատիժան ջանք ընել:

Բ. Դադարեցնենք մեր սերտ յարաբերութիւնները անոնց հետ, որոնք մեզի համար այս կէտին մէջ փորձութիւն են. յիշեցնենք անոնց նաեւ իրենց սխալը եւ սիրով ու յարատեւութեամբ ազօթենք անոնց համար:

Գ. Միտքերնիս պահենք թէ Ս. Հոգին Պօղոս առաքեալին միջոցով ուղղութիւն կուտայ մեր խօսակցութեանց, Եփես. Ե. 19, 20ով եւ Կող. Դ. 16, 17: Նաեւ մեր խօսակցութեանց կերպը ըլլալու է Կող. Դ. 6ի պէս, իսկ խօսակցութեանց հոգին Փիլ. Բ. 3-5ով:

Սակայն անցնելով այս կէտէն, որու վրայ կը հաւատամ թէ կրնանք յաղթութիւնը տանիլ Տէր Յիսուսի շնորհքովը, (Փիլ. Դ. 13), կանգ առնենք ուրիշ լեզուի մեղքի մը առջեւ, որ աւելինուրբ ու անվտանգ կ'երեւի, սակայն թագուն ու աւերիչ է Աստուծոյ զաւակներուն համար: Այս է մեր խօսակցութեանց մէջ մեր սովորական հոգեւոր ոճերը զորոնք կը գործածենք առանց մտածելու թէ այս խօսքերուն հետեւ մեր ներքին մարդը կը կենայ: Այս է պատճառը մեր վերնադրին Պէտք էր թերեւս ըսէի բարեպաշտ ականջներ, բարեպաշտ լեզուներ եւ բարեպաշտ խօսքեր: Բեթէլի մարգարէից որդիները ազդարար օրինակ են մեզի: Անոնք իրենց բարեպաշտ ականջներով եւ ներքին տեսութեամբ հասկցան թէ Եղիա պիտի վերցուէր, եւ բարեպաշտ լեզուն ալ այս մեծ գիտութեան առջեւ հանդարտ չէր կենար: Անոնք հաւանաբար մինչեւ Եղիսէն տեսնելը իրարու հետ խօսեցան ու խօսեցան ու երբ զայն տեսան, իրենց առաջին խօսքն էր, գիտե՞ս...:

Ա՛խ, այս «գիտե՞ս»ին մէջ «բքա՛ն» զիտութիւն կայ, բայց գիտութիւն մը միայն մտքի, որ սակայն բնաւ ոյժ մը եւ օգտակարութիւն մը չունեցաւ իրենց համար: Անոնց սիրտը մունջ եւ անտարբեր էր այն փառաւոր յայտնութեան առջեւ զոր ունեցան. իրենք բաւականացան միայն գիտցած ըլլալով: Ներկայիս զանոնք տեսական մարդիկ պիտի կոչէինք, որոնց մէջ կը պակսի կամքը, յարատեւութիւնը, նուիրումը: Հոգեւոր բարձրագոյն տեսիլքներու եւ յայտնութեանց հանդէպ հետաքրքրութեան այդ պակասը ո՞վ գիտէ զանոնք ի՞նչ մեծ օրհնութիւններէ զրկեց: Ու այսպիսիներ բնաւ պակաս չեն Աստուծոյ եկեղեցիին մէջ: Անոնք ճշմարտութիւնները գիտեն, անոնց մասին կը խօսին, բայց հոն կը մնան: Ծշմարտութիւնը իրենց կեանքը չարգիւնաւորեր: Հոգեւոր ոճեր զոց ստիճած են, «Եկո՛ւր, Տէր Յիսուս», կ'ըսեն եւ Գրիգորիոս երկրորդ զաւստեան մասին կը խօսին ու կը սորվեցընեն ալ, բայց անոնց կեանքը եւ վարկելակերպը բոլորովին հակառակ կը փաստէ այդ խօսքերուն: «Ո՛վ Տէր, այգիիդ մշակներ հանէ» կ'ազօթեն, բայց անոր հետեւ լոճեւան կը հասկցընեն «բայց ոչ գի», եւ չըլլայ թէ ինձմէ զրամ ուզեմ», հապա ուրիշը, ուրիշէն, ուրիշով:

Ուր որ կեղծ ու կէս հոգեւորութիւն կը տիրէ, հոն պտղաբերութիւն չըլլար: Ի՞նչ ցաւալի է տեսնել ասանկ եկեղեցւոյ անդամներ եւ եկեղեցիներ լիցուած անպտուղ հաւատացեալներով: Տէրոջը խօսքերը Մատթ. ԺԲ. 33-37ի մէջ, մեղի համար ալ ազդարարութիւն մը չեն: ՅՅի մէջ գրուած դատարկ խօսքը, հոգեւոր բռնեք խօսող բայց անոնց զօրութիւնը ուրացող Աստուծոյ զաւակներուն ալ չ'յարմարիր: Ծնողաներու ձայն տուող խօսքեր:

Ի՞նչ ընենք ուրեմն...—

Աստուծոյ եկեղեցին պէտք է ազատուի այսպիսի տեսական խօսողներէ: Այսպիսի անձեր ալլեւս թօթափելու են իրենց թմբութիւնը հոգեւոր բարձր հասկացողութեանց հանդէպ: Աստուած մեզ խօսքի մարդ չատեղծեց, այլ սրպէս Աստուծոյ որդիներ, լուսոյ որդիներու պէս քալել պէտք է մեզի: «Ծառը բարի ըրէք», կ'ըսէ Տէրը, ըսել ուզելով թէ կայ բան մը որ մենք ընելու ենք: Նախ մեր ամբողջ անդամներովը Աստուծոյ ընծայուելու ենք, արդարութեան գործիքներ ըլլալու Անոր համար:

Յետոյ այս նուիրումը օրէ օր եւ ժամէ ժամ

(Շար. կարդալ 175րդ էջ)



ԻՄ ՈՐԴԻՍ ՏԻՄՈՓԷՈՍ

(Փիլ. Բ. 19 24)

«Արդ կը յուսամ Տէր Յիսուսով»: Պօղոսի կեանքին մէջ ամէն մէկ ծաղիկ միեւնոյն ածուէն կը ծլի, այսինքն իր Տէր ու Փրկիչ Յիսուս Գրիստոսէն: Անիկա չունի փափաք մը որ Յիսուսի վրայ արմատացած չլլալ, ոչ ալ յոյս մը՝ որ Անկէ չառնէ իր սնունդը: Անյուծելի կերպով միացած է Փրկչին ու ամէն ինչ այս հաղորդակցութենէն կեանք կ'առնէ: Շատ մը քրիստոնեաներու համար ճշմոթամային պարագաներ միայն արմատացած են Տէրոջը մէջ, կեանքի մեծ նպատակներն ու ղէպքերը որ ժամանակէ ժամանակ կ'երեւնան. սակայն երեւութապէս աւելի փոքրիկ խնդիրները, առօրեայ բաղձանքները, սովորական ծրագրերը, հասարակ ճամբորդութիւններն ու միօրինակ երթեւեկութիւնները յարուցեալ Գրիստոսի հետ կենսունակ առնչութեան բերելը կարեւոր չեն նկատեր: Շատ աւելի գեղեցիկ է այն կեանքը, որուն ոչ միայն բարձրաբերձ կադնիւններն ու արմատներն արմատացած են Տէրոջը մէջ, այլ նաեւ անոր փափուկ, նուրբ ու դուրսբեկ մասերը, ինչպէս բաղձանքները, ըզգացումները եւ դողդոջուն յոյսերը:

Եւ ի՞նչ է այս յոյսը որ Տէրոջով սնուցուած եւ իրականացած է. «Որ Տիմոթէոսը շուտով ձեզի ղրկեմ»: Առաքեալին բոլորանուէր կեանքէն քաջալերական նշոյլ մը կ'երեւնայ հոս: Մէկը տեղեկութիւն մը առնելու համար տեղ մը ղրկելէ աւելի սովորական բան մը կա՞յ արդեօք: Սակայն Պօղոս իր այս նպատակին իսկ կ'ուզէ կենդանութիւն տալ Տէրոջը շունչովը: Անիկա կ'ուզէ ամէն բանի մէջ «Աստուծոյ կենդանի» ըլլալ: Անոր կեանքին բոլոր պարագաները, մեծ կամ փոքր, թագաւորին կնիքը կրելու են, ինչպէս որ երկրի մը մեծ կամ պզտիկ դրամները այն երկրին թագաւորին կնիքը կը կրեն: Մեզմէ շատերուն սխալը հոս է որ մեր նուիրումը մեծ կէտերու մէջ սիւսն կ'երեւնայ: Պօղոս առաքեալի կեանքը կարծես անընդհատ նուիրում մըն է:

«Որպէսզի իմ սիրտս ալ հանգչի, երբ ձեր վի-

ճակը գիտնամ»: Սրբազան առաքեալը կը քաջալերուի ուրիշներու յառաջդիմութիւններէն: Անիկա կ'զգայ ուրիշներու վրայ հանգչող արեգակին տաքութիւնը: Կ'ամրապնդուի անոնց զօրութեամբ: Ուրիշի մը աղբիւրէն ընդունած ջուրը իրեն անուշ կուզայ: Սուրբերու հաղորդակցութեան կեանքը ճոխացնող պաղտնիքներէն մէկն ալ ասիկա է: Տէրոջը նպատակն է որ Իրեն իւր իրարու կապուին իրենց զանազան պարգևներովն ու շնորհքներովը: Անոր նպատակն է որ այցելութիւններ ընենք իրարու կեանքերուն մէջ, ինչպէս որ կ'այցելենք իրարու պարտէզն ու նորանոր ծաղիկներու բուրումներով ներշնչուած տուն կը վերադառնանք: Եթէ այսպէս ընենք, թերեւս մեր ընկեր աշակերտները մեզի ընծիւղ մը կամ արմատ մը տան իրենց պարտէզներէն՝ ճոխացնելու մեր պարտէզին գեղեցիկութիւնը, որով ամէնա ալ աւելի կը հարստանանք Տէմոջով:

«Վասնզի սրտակից մէկը չունիմ որ մտերմաբար ձեզի համար հոգ տանի, քանզի ամէնը իրենցը կը փնտռեն ու ոչ թէ Յիսուս Գրիստոսինը»: Ասիկա ճիշդ հակառակն է մեր վերեւ նկատողութեան առած տրամադրութեան: Անիկա անձնասիրական նուիրում մըն է եւ անհոգ սրբացում մը: Հոս մարդիկ բարձր ու թանձր պարիսպներ կը կանգնեն, որպէսզի չկրնանք անոնց վրայէն իրենց պարտէզներուն նայիլ: Պարիսպներուն մէջ դռներ իսկ չեն թողուր, որ չլլայ թէ շրջանորայի այցելութիւններ ու բարեկամական խօսակցութիւններ փոխանակենք իրենց հետ: Հոս կը տեսնենք մարդիկ՝ որ թէպէտեւ Տէրոջը դրօշակին տակ կը քալեն, սակայն Անոր շահերը չեն փնտռեր: Միմիայն իւրենց անձերուն համար հետազօտութիւններ կը կատարեն ու Աստուծոյ թագաւորութեան ընդարձակ ու ընդհանուր դրօշակը չեն շահագործուիր երբեք: Այսու հանգերձ կը դաւանին թէ քրիստոնեայ եկեղեցիի անդամներ են: Ի՞նչ եղելի իրականութիւն եւ մեծ ողբերգութիւն: Ամէն դարու մէջ կը հանդիպինք այսպիսիներու: Եղելի՛ վիճակ, որ երբեք ուրիշինը չփնտռեր ու ողբերգական հետեւանք, որ իրենը փնտռելով զայն երբեք չգտներ: Իրականութիւն կը փնտռէ իրեն համար ու կեղծիքի կը հանդիպի: Միւթարութիւն կը փնտռէ ու լոկ վայրկեանական սփոփանք կը գտնէ: Ուրախութիւն կը փնտռէ ու միայն վաղանցիկ երջանկութեան կը հասնի: Խաղաղութեան ետեւէ կ'իյնայ ու միմիայն նիւթական անդորրութեան կը հասնի: Ան

որ իր եղբայրը անտեսել կը մտադրէ, երբեք չը գտնէր իր անձնական կեանքը: Եթէ իրապէս մօրինը գտնել կ'ուզենք, դայն փնտռելու ենք Յիսուս Քրիստոսին մէջ ու Անորինը մեր պարտէզին պարիսպէն անդին կը գտնուի եւ մեր եղբորը պատկանածով ու անոր բարօրութեամբ կը շահագործուի: Ոչ ոք կրնայ իր եղբայրը մոռնալ եւ միեւնոյն ատեն ճանչնալ իր Տէրը: «Ան որ իր եղբայրը չսիրէր՝ զոր կը տեսնէ, զԱստուած զոր չտեսներ, ի՞նչպէս կրնայ սիրել»:

«Բայց դուք անոր փորձը գիտէք, որ ինչպէս որդի մը հօրը հետ՝ այնպէս ինծի հետ ծառայութիւն ըրաւ Աւետարանին մէջ»: Ի՞նչ դեղեցկութիւն տեսնել քրիստոնեաներ որ խոտապահանջ փորձառութիւններու տոկալով՝ «փորձուած» նկարագիրներ կը ներկայացնեն ու յայտնապէս Աստուծոյ Որդւոյն կնիքը կը կրեն: Երեսնորհալի յաջողութիւն մըն է հանդիպիլ այդպիսիներու որ պատրաստ են իրենց դռները մեզի բանալու եւ զմեզ իբրեւ Տէր Յիսուս Քրիստոսի վաւերացեալ ներկայացուցիչները ընդունելու: Այս էր երիտասարդ Տիմոթէոսի կացութիւնը: Շարունակ ուրիշներու համար կ'աշխատէր. ուրիշներու բռնները կը կրէր. համակրական այցելութիւններ կ'ընէր՝ ուր որ կրնար օգնութեան հասնելու: Անոր ազօթքները լեցուն էին ուրիշներու թշուառութիւններով ու կարօտութիւններով: Անոր մեծ, ընդարձակ, աշխատէր խնդրուածքներուն մէջ հազիւ թէ անկին մը կը գտնուէր իրեն համար: Ուրիշները յիշելով՝ չըրէթէ կը մոռնար ինքզինքը: Անոր համար ալ Տէրը զայն յիշեց ու անոր տուաւ «պահուած մանանայէն» ու «ծածկուած զանձէն» ու զանիկա զօրաւոր ու գեղեցիկ ըրաւ իր ընկերներուն աչքերուն առջեւ: Անիկա Տէր Յիսուս Քրիստոսը հազած էր, սակայն չէր գիտեր թէ իր «երեսը կը փայլէր» ոչ ալ գիտակից էր թէ որքան վեհ ու վայելուչ կ'երեսնար իր «փրկութեան հանդերձներուն» մէջ: Քանզի Տիմոթէոսի մէջ կատարուած էր այն մեծ հոգեւոր օրէնքը որ կ'ըսէ, «Ան որ իր կեանքը կը կորսնցնէ, պիտի գտնէ զանիկա»:

«Ուստի կը յուսամ զանիկա զրկել շուտ մը»: Այս երիտասարդ ու վստահելի դեսպանը՝ հոգեւոր հաղորդակցութեան կենդանի կապ մը պիտի ըլլար բանտարկեալ առաքեալին ու անոր հեռաւոր հոգեւոր բարեկամներուն միջեւ:

ՅԻՍՈՒՍԻ ԱՍՏՈՒԱԾՈՒԹԵԱՆ ԼԵՅՈՒՆՈՒԹԻՒՆԸ

Կող. Ա. 19, 23

Աստուած ամենագէտ, Փրկիչ ամենուրէք, Տէր ամենակալ, անհուն էակ, պաշտամունքի անձայրածիր Ովկէան:

Քու մէջդ թիւր պաշտուելու դարերուն մէջ յաւիտեան՝ անուշաբոյր խորութիւններ, բազմաբարեան բարձունքներ եւ յաւիտեան լայնատարած երկայնատութեամբ՝ մեր սրբտերը զըրաւող սիրոյ քաղցր հեղեղներ կան:

Քու սուրբերդ անձանձիր, Հալոտի դադրին Քեզ պաշտելէ, որքան պաշտեն, այնքան պաշտել պիտի ուզեն:

Ձի քու մէջդ պարունակուած աստուածային գանձերը վեհ, Հրեշտակներուդ եւ սուրբերուդ յաւիտեանս՝ երջանկաւէտ նորութիւններ պիտի ըլլան:

Ասոր համար երանութեան ու սրբութեան աշխարհիդ մէջ, Քու սուրբերուդ սրտերն ուրախ, պիտի ուռճանան աւելի, եւ աւելի լեցուելով հեղեղներով սուրբ սիրոյդ՝ պիտի թնդացնեն տիեզերքը խրախճանքի ու ցընծութեան ձայներով, Գառնուկին երգը երգելով:

Քանզի ով սուրբ լուսոյ աղբիւր,
պայծառութիւն յաւերժական,

Երբ Քու սուրբերդ յաւիտեանս,
Փառացի փառս փոխադրուին,
Բարձրանալով իւրաքանչիւր քայլափոխի,
Պիտի պտղութեան սրտաբուլղիւ փառքի՝ ձայներ,
Խախտելով դժոխքն իր հիմերէն,
Սարսելով իր զարհուրելի ու մռայլ
Խորերը պիղծ տառապանքի յաւիտեանս:

Ով սուրբ սիրոյ՝ պայծառ ու ջինջ
եւ անյատակ Ովկէան,

Քու սուրբերուդ մարմինները թափանցիկ՝
Պիտի լողան յաւիտեանս, սիրոյ անհուն
Ովկէանին մէջ,
Ծծելով հոն՝ մաքուր սէրդ, միշտ աւելի,
միշտ ուրախ եւ միշտ անվերջ:

Ասոր համար սիրոյ ձայներ, մեղեդիներ
քաղցրահնչիւն,

Եղբայրներուդ սուրբ շրթներէն պիտի ելլեն
 Քեզ գովելու Սուրբ Գառնուկ,
 Ստեղծելով մեզմ' բայց հըսկայ ալիքներու
 շարժում մը,
 Թեւատարած եւ ընդգրկած տիեզերքի
 ամբողջութիւնն յաւիտեան՝
 Անուշ ու քաղցր հպումներով,
 Բայց մաքուր ու սուր սրտերով
 Զաւակներուդ խորերն արդար էութեան:

Ո՛վ ճշմարտութեան, անբիծ ու անարատ
 յաւիտենածաւալ, հակայական միջավայր,
 Քու սուրբերուդ քաղցրահնչիւն անմեղ
 բառերն պաշտամունքի,
 Միշտ հոսելով անապական, փառաւորուած
 մարմիններու խորերէն,
 Եւ մեղմօրօր խոհերով լի, սուրբ սրտերուն
 խաղաղութեան փայլն ու փառքը,
 Պիտի պատմեն ճշմարտութեան հանգստաւէտ,
 Անդորր դիրքը՝ խղճի ազատ երջանկութեան:

Մինչ դժոխքէն կականները սարսռազդ,
 Կը բարձրանան ճիւղալային սրտերէն,
 Խղճահարուած, անպատմելի աղիողորմ
 էակներէն տոչորուն,
 Այդ նողկալի հրէշներու աշխարհէն,
 Գալարումներ, վայնասիւններ, ակռաներու
 կըրճըտումներ
 Զարհուրելի կոհակներու պէս մոլեգին,
 Որոտումով ահռելի,
 Կը խորտակուին խորքն դժոխքի,
 Հո՛ն, անյատակ, սեւ աշխարհի լուծեան
 մէջ տաղտկալի:

Ո՛վ խաղաղութեան Աստուած հրաշալի,
 Անափունք, անծայրածիր, անըմբռնելի,
 Գերիվերոյ չնաշխարհիկ զրութիւն,
 Վսեմ գարնան պայծառութեան շողերու:
 Եւ հրաշէկ լուսաճաճանչ արեգակի,
 Շոյալ լուսով ողողուած,
 Աղբիւրներու, առուակներու, խաղաղահոս
 սահանքներու,
 Գլխացող անուշութիւնն ու քաղցրութիւնն
 Կրնան միայն Քու շնորհած անդորր կեանքիդ
 Խորհրդապատկերն մեզի յայտնել:

Իսկ ծառերու զգիւնէն մեզմ' շարժած
 կանանչ տերեւներու սօսափիւնը,
 Թըռռուններու ճողողիւնը,
 Քաղցրահնչիւն ու ներգաշնակ երգի նման,

Անոր միայն խորհրդանշանն կ'աւետեն:
 Զի սուրբերուդ մաքուր ու վեհ սրտերէն
 Խաղաղութեան ալիքները անմըռունչ,
 Երբ Քու սրտիդ խաղաղաւէտ հոսանքներուն
 միանան,
 Տիեզերքդ յաւիտենական, տիեզերքդ դարերու,
 Կը ծածկուի, կը սքանչանայ,
 Անդորրութեամբ, անլուսի մրմունջներով,
 Բայց զգալի՝ իբր հրաշափառ խաղաղութեան
 ոգիէն:

Մինչ դհհհհնը ճարճատուով բոցավառ,
 Անմարելի, աննիւթ, ահեղ կրակով,
 Թոհի, բոհի, անպատմելի տառապանքի
 ու վայրերու խոյանքէն
 Կը դլրդէ էութիւնը՝ անէծքներու տակ
 ընկճուած հոգիներու սարսըռուն:

Ո՛վ արդարութեան, սիրոյ բնութիւն,
 Փրկիչ անճառելի,
 Քու սուրբերդ իրենց համակ էութեամբ,
 Քու սուրբ սրտիդ խորանին մէջ կ'ուրախանան,
 Պաշտամունքի ու փառքի,
 Արդարութեան ու սիրոյ,
 Երջանկութեան անսըխալ,
 Կեանքն ապրելով յաւիտեան:

Մ. ՎԷՔԻԼԵԱՆ

ԱԼՓՕՐՎԻԼ

ԱՆԹԵՐԻ ԱՆՁՆՈՒԻՐՈՒԹԻՒՆ

Այսօր Յիսուսի ըսի թէ զի՛նքը իբրեւ իմ ամբողջ բաժինս եւ երանութիւնս ընդունեցի: Ուրիշ ոեւէ բանի պիտի չնայիմ իբրեւ իմ ուրախութեանս մէկ մասը եւ ոչ ալ իմ վարմունքովս անանկ պիտի ցուցնեմ:

Իր օրէնքը իմ հնազանդութեանս մնայուն կանոնը պիտի ընեմ: Բոլոր ուժովս եւ կեանքովս մինչեւ վերջը պիտի մաքառիմ իմ անձիս դէմ, մարմնաւոր ցանկութիւններու դէմ եւ Սատանային դէմ:

Պիտի հաւատամ ընդմիշտ իմ Տէրոջս Յիսուս Քրիստոսի եւ պիտի ընդունիմ զԱյն իբր իմ վեհապետ Փրկիչս, պիտի հպիմ, հաւատամ եւ հընազանդիմ Անոր Աւետարանին:

Ընդունած եմ օրհնեալ Սուրբ Հոգին իբրեւ իմ Վարժապետս, Սրբացուցիչս եւ միմիայն Մը-խիթարիչս: Կը հետեւիմ Անոր ամէն շարժ ու ձեւին, որ յուսաւորէ, գտտէ, հաստատէ եւ օգնէ ինծի:

ԱՍԻԿԱ ԸՐԻ

Այժմ կ'աղօթեմ երկնաւոր Հօրս Քրիստոսի սիրովը, որ աս անձնութիւնը ընդունի եւ իբրը Իր սեփականութիւնը վարուի ինծի հետ, որպէս այն ամէն կեանքի պայմաններուն տակ. եթէ ուզէ վշտացնել զիս, կամ ինչ որ Իր սուրբ կամքը ուզէ ընել ինծի՝ ընէ, քանզի Իրն եմ:

Այսուհետեւ ես իմ անձիս տէրը եղողի պէս պիտի չշարժիմ... Ինքզինքս ուխտադրուած պիտի նկատեմ, եթէ իմ գործութեանս վստահելով ունէ զործ մը ընեմ:

Աստուծոյ փառքը փնտռելը եւ զԱյն փառաւորելը իմ բովանդակ զբաղումս պիտի ըլլայ:

Եթէ վիշտերու եւ ձախորդութիւններու մէջ տրտնջեմ,

Եթէ ուրիշներու յաջողութեան ատեն դառն զգգամ,

Եթէ որեւիցէ բերումով սէրս պակսի,

Եթէ փաստներու կամ զրկանք կրելու համար բարկացած եմ,

Եթէ անձիս ունէ պատճառով վրէժխնդրութիւն ընեմ,

Եթէ հանգիստ մնալու համար պարտա-կանութենէ խուսափիմ,

Եթէ անձնութեան ատեւ ընկերկիմ,

Եթէ ունէ բարիքի կամ ծառայութեան համար անձիս գովեստ ընդունիմ,

— Ինքզինքս շնորհքէ ինկած պիտի ճանչնամ եւ ապաշխարեմ...

Վ. Գ. ՄՈՒՄՃԵԱՆ

Հետեւողութեամբ

Janothan Edwards

.....

Արդարութեամբ քալողը, եւ ուղղութիւն խօսողը, անիրաւութեան շահը մերժողը, կաշառք առնելէն ձեռքերը թօթվողը, արիւնահեղութեան խօսքերը չլսելու համար ականջները զոցողը, ու չարութիւնը չտեսնելու համար աչքերը գոցողը: Անիկա բարձրերը պիտի բնակի, անոր բերդը ամուր վէմերու վրայ պիտի ըլլայ, անոր հաց պիտի տրուի ու անոր ջուրը անպակաս պիտի ըլլայ:

Եսայ. ԼԳ. 15, 16



ՏՈՒՏՈՒ

Հարէպ ծանօթացալ իրեն: Գաղթակայանի խեղճ տնակներէն մէկուն մէջ կը բնակէր: Հակառակ իր ծայրայեղ թշուառութեան, մաքուր էր: Իր գէմքը այն ներքին խաղաղութիւնը կ'արտայայտէր որ միայն յատուկ է Աստուծոյ իսկական զաւակներուն, որոնք կը պահեն զայն կեանքի ամենափոթորկալից շրջաններուն իսկ:

Ահա իր պատմութիւնը.—

Պատերազմէն առաջ, Տուտու, իր ամուսնոյն եւ տղոց հետ միասին թուրքիոյ փոքրիկ գիւղերէն մէկուն մէջ կ'ապրէր: Հալածանքները հազիւ սկսած, 1915ին իր որդիներէն մին ձերբակալուեցաւ եւ բանտին մէջ այնպիսի անտանելի չարչարանքներու ենթարկուեցաւ որ մինչեւ այսօր տկար եւ հիւանդոտ մնաց: Իր որդիներէն ուրիշ մը, գիւղէն հեռու, Ուրֆա քաղաքաւ, ուր յաճախ անմեղ բանտարկեալներ առանց այլեւ ալի կ'ապանուէին թուրք զինուորներէն: Երբեմն ազատուելու պատահութիւնը կ'ունենային, եթէ երբեք քրիստոնէութիւնը զրօնով մուհամետականութիւնը իրենց կրօնք ընդունէին: Բայց Տուտուի որդին այսպէս կ'ըզէր իր մօրը, «Մայրիկ, մի վախար, ես Յիսուսը երբեք պիտի չը թողում, եթէ զիս մեռցնեն, Անոր քով պիտի երթամ»: Եւ իրօք իր խոստման հաւատարիմ մընաց: Զինք մեռցուցին, եւ անշուշտ Անոր քով գնաց:

Մօր վիշտը մեծ էր եւ հեկեկաց իր որդւոյն կորուստը: Սակայն այս չէր բուրրը:

Քիչ յետոյ ամուսինը ձերբակալուեցաւ եւ բանտ առաջնորդուեցաւ: Թուրքերը առաջարկեցին որ քրիստոնէութիւնը ուրանայ: Ան մերժեց, հակառակ ամենաքիտ հարուածներու տեղապարակին: Իր յամառ ընդդիմութիւնը այնքան զայրացուց թուրք զինուորներէն մին, որ կատաղի մոլուցքով լեցուած տապարի անողոք հարուածով մը կտրեց իր ձեռքը:

Խեղճ կիներ ներկայ այս սրտաբեկ տեսարանին, պաղատագին գութ աղերսեց դահիճներէն: Բայց անոնք իբր պատասխան, խուժեցին իր վրայ եւ սկսան անխնայ ծեծել զինք: Հարուածներէն մին ուժգին աչքերէն միոյն եկաւ եւ Տու-

տու միականի մնաց: Վերջապէս ամուսինը արձակեցին:

Պատերազմէն երկու տարի վերջ էր երբ Մարաշ կը գտնուէին: Այս քաղաքի քրիստոնեաները նոր եւ տխուր դէպքեր պիտի դիմագրաւէին: Յրանսական բանակը, որ այն ատեն թուրքերուն դէմ կը կռուէր, ստիպուեցաւ նահանջել: Հայերը անպաշտպան մնալու վախէն, ուղեցին խոյս տալ քաղաքէն եւ ֆրանսական բանակին հետեւեցան: Բայց հակառակ որ Մարաշ լեռնաքաղաք մը չէր, ձիւնի յանկարծական բռն փոթորիկ մը խուճապի մատնեց զիրենք: Հարիւրաւորներ միմեան ձիւնին մէջ, որոնց մէջ էր նաեւ Տուտուի ամուսինը: Տուտու Ամերիկեան միսիոնարական գօլէճը ապաստանելով ազատեցաւ: Բայց հիւանդութեան մը հետեւանքով միւս աչքն ալ կորսնցուց եւ բոլորովին կուրցաւ:

Խորունկ յուզմամբ համակուած մտիկ ըրի այս տխուր պատմութիւնը:

Խեղճ կին, ի՛նչ տառապանք, ի՛նչ փորձութիւն: Արդեօք Աստուծոյ դէմ ինք ալ քէն ըրած չէ՞ր, շատ մը ուրիշներուն պէս որոնց կեանքը ձախողած ըլլալով այդ կամ այն կերպով կը հեռանան Աստուծմէ: Հարցուցի իրեն թէ միթէ այս անվերջ եւ դժուակ նեղութիւնները իր հաւատքը չէ՞ին տկարացուցած, չէ՞ր փորձուած Աստուծոյ եւ անոր սիրոյն մասին տարակուսիլ: Յանկարծ իր դէմքը ուրախութեամբ փայլեցաւ եւ ըսաւ, «Ո՛հ, բնաւ երբեք, ընդհակառակը փորձառութեամբ սորվեցայ թէ Աստուած որքան կը զօրացնէ անոնք որոնք պէտք ունին ուժի եւ մըխիթարութեան: Իմ տառապանքներուս մէջ Աստուած յաճախ մօտեցաւ ինծի, եւ հիմա հակառակ իմ թշուառութեանս, սիրտս լեցուն է խաղաղութեամբ եւ ուրախութեամբ»: Ըսաւ նաեւ թէ որքան երախտագէտ եւ ուրախ էր իր տղուն վրկայութեան համար որ մեռած էր հաւատարիմ մնալով իր Փրկչին: Եւ յետոյ զոհունակութեամբ աւելցուց, «Փառք Աստուծոյ, եթէ մեռաւ, պարզապէս՝ որպէսզի Յիսուսի քով երթայ»:

DR. P. BERRON

«Le Levent»

Զեզի մարդկային փորձութենէ զատ ուրիշ չէ պատահած, բայց Աստուած հաւատարիմ է, որ ձեզ պիտի չթողու ձեր կարողութենէն աւելի փորձելի, հապա փորձութեան հետ ազատութեան միջոց մըն ալ պիտի տայ, որպէսզի կարող ըլլաք համբերել:

Ա. Կոր. Ժ. 43



ԱՀԱ ԵՍ ՇՈՒՏՈՎ ԿՈՒԳՍՄ

«...Ասիկա թերեւս իրիկունը պիտի ըլլայ, երբ օրուան աշխատանքը վերջացած է եւ որ նըստած կը նայիս արեւուն հորիզոնին վրայ խոնարհելուն, այն ժամուն որ օրուան լոյսը կամաց մը կը մարի ծովուն մէջ, երբ ամէն բան կը դառնայ խաղաղ եւ անդորր ու կը թուի Ինձմով լեցուն: Մինչ մտիկ կ'ընես զիւզին մանուկներուն փողոցին մէջ վազվզելու աղմուկին, կըրնաս այդ բոլոր քաղաքի ձայներուն մէջ լըսել նաեւ Իմինս. ատոր համար կ'ըսեմ քեզի, «Արթուն կեցիր իրիկունան, երբ աստղերը կը փայլին, արթուն կեցիր, երբ սենեակը կը մթննայ, դուռը կ'սաբաց ձգէ, վասնզի կուգամ թերեւս այն ատեն երբ իրիկունան մութը կը սկսի կոխել»:

«Ասիկա թերեւս կէս գիշերին պիտի ըլլայ, երբ մութը իր ծանր վարագոյրը կը տարածէ երկրի վրայ, երբ կը թուի թէ ալիքները աւելի մեղմօրէն կը բաղխին եզերքին, երբ գիշերը առանց լուսինի եւ տունը առանց լոյսի է, երբ օճախին վերջին կրակի կայծերը կը մարին, երբ ժամացոյցը իր միօրինակ թիք-թաքը լսելի կ'ընէ, այն ատեն երբ դուն նոյնիսկ յոգնած, քընացած լլլած, թող սիրտդ արթուն ըլլայ, քանզի թերեւս կէս գիշերին է որ կուգամ»:

«Ասիկա թերեւս հաւաքութիւն պիտի ըլլայ, երբ մութը կամացուկ կ'սկսի քաշուիլ, երբ խաղաղ ու պայծառ ծովը կ'սպասէ ոսկեգոյն արշալոյսին ծագելուն, երբ մշուշը կը ծածկէ հովիտը, երբ իմ առաւօտեան աստղս աստիճանաբար կ'աղօտանայ. ահա ձեզի կը կրկնեմ, արթուն կեցէք. թող ձեր տանը դուռը կ'սաբաց ըլլայ, վասնզի այն ժամուն որ արշալոյսին կ'սպասուի, գիշերուան ու ցորեկին միջին է թերեւս որ կուգամ»:

«Ասիկա թերեւս առաւօտուն պիտի ըլլայ, երբ արեւը իր պայծառութեամբ կը լուսաւորէ, երբ խոտին վրայ ցօղը կը փայլի, երբ ալիքները ծովափին վրայ իրենց աղմկալի ծիծաղը



Ս. ԳՐԱԿԱՆ

ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ

Քաղեց՝ SCOFFIELD էն

Վ. ՍԱՀԱԿԵԱՆ

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

○○○○○○○○

Աստուածաշունչին մէջ Սուրբ Հոգին անձնաւորութիւնը եւ Աստուածութիւնը երեւան կուգայ Անոր վերագրուած յատկութիւններէն եւ Անոր գործերէն: Առնենք նախ Հին Կտակարանը:

1. Սուրբ Հոգին ստեղծագործութեան մէջ բաժին ունի եւ ուստի ամենակարող է (Ծնդ. Ա. 2, Յոբ. ԻԶ. 13, ԼԳ. 4, Սաղ. ԺԴ. 30), ամենուրէք է (Սամ. ԺԼԹ. 7), մարդիկ կը յանդիմանէ (Ծնդ. 2. 3), կը լուսաւորէ (Յոբ. ԼԲ. 8), վարպետութեան իմաստութիւն կուտայ (Ելեց ԻԸ. 3, ԼԱ. 3), մարմնի զօրութիւն կուտայ (Դատ. ԺԴ. 6, 19), ձեռնարկի քաջութիւն եւ իմաստութիւն կուտայ (Դատ. Գ. 10, 2. 34, ԺԱ. 29, ԺԳ. 25), Աստուածային յայտնութիւններ ստանալ եւ խօսելու կարողութիւն կուտայ (Թու. ԺԱ. 25, Բ. Թադ. ԻԳ. 2) եւ ընդհանրապէս Աստուծոյ ծառաները զօրութեամբ կը զօտեւորէ (Սաղ. ԾԱ. 12, Յովել Բ. 28, Միք. Գ. 8, Զաք. Դ. 6):

2. Սուրբ Հոգին կոչուած է.— Սուրբ Սաղ. ԾԱ. 14), Բարի (Սաղ. ԺԽԳ. 10), Դատաստանի Հոգին եւ Այրող Հոգին (Եսայ. Դ. 4), «Եհովայի, իմաստութեան, հանճարի, խորհուրդի, զօրութեան, Գիտութեան եւ Աստուծոյ վախին Հոգին (Եսայ. ԺԱ. 2), շնորհքի եւ աղօթքի Հոգին (Զաք. ԺԲ. 10):

3. Հին Կտակարանին մէջ Հոգին ազատ զերիշխանութեամբ կը գործէ. մարդոց եւ նոյնիսկ համր անասունի մը վրայ ալ կուգայ իր կամ:

Կարձակեն, երբ փոքրիկ թռչունները քաղցրանոյշ կ'երգեն: Երբ աշխատանքի երկար օրը առջևդ է, երբ դրացիներուդ հետ կը խօսակցիս զործի սկսելէ առաջ: Յիշէ թէ յանկարծ կրնամ գալ: Մինչ կ'աշխատես, թող սիրտդ արթուն ըլլայ, դուրս կիսաբաց ձգէ, քանզի թերեւս առաւել է որ կուգամ»:

«Notre Esperance» էն

Թարգ. Ի. Յ. ԱՅՐԱՀԱՄԵԱՆ

Սէնթ Էթիէն

քին համաձայն. ոչ ալ պայմաններ դրուած են (Նոր Կտակարանին մէջ եղածին նման) որպէսզի անոնք լրացնող ռեւէ անձ Հոգին ստանայ: Սուրբ Հոգիին ամէն հաւատացեալի ներսիդին բռնակելու իրողութիւնը Նոր Կտակարանի օրհնութիւն մըն է իբր արդիւնք Քրիստոսի մահուան եւ յարութեան (Յովհ. Է. 39, ԺԶ. 7, Գ. Առաք. Բ. 33, Դադ. Գ. 4-6):

4. Հին Կտակարանը կը պարունակէ մարգարէութիւններ ըստ որում գալիք օրերու մէջ Հոգին պիտի թափուի Իսրայէլի վրայ (Եղեկ. ԼԷ. 14, ԼԹ. 29) եւ «ամէն մարմնի» վրայ (Յովել Բ. 28, 29): Ուստի Իսրայէլի ակնկալութիւնը երկու տեսակ էր.— Մեսիա-էմմանուէլի գալըստը եւ այնպիսի հեղում մը Հոգիին, որ մարգարէները կը նկարագրեն:

Սուրբ Հոգին Նոր Կտակարանին մէջ.—

1. Հոս եւս Նա որոշ կերպով իբր Աստուածային անձնաւորութիւն մը յայտարարուած է (Յովհ. ԺԴ. 16, 17, 26, ԺԵ. 26, ԺԶ. 7-15, Մատթ. ԻԸ. 19):

2. Անոր յայտնութիւնը յառաջդիմական է: Երկրի վրայ իր ապրած շրջանին Քրիստոս Իր աշակերտներուն սորվեցուց (Ղուկ. ԺԱ. 13) թէ անոնք կրնային Հոգին ստանալ Հօրը աղօթելով: Իր պաշտօնէութեան վախճանին նա խոստացաւ թէ Ինք Հօրը պիտի աղաչէ եւ Իր աղօթքին ի պատասխան Միխթարիչը պիտի գայ բնակիլ աշակերտներուն հետ (Յովհ. ԺԴ. 16, 17): Յարութեան օրոտան իրիկունը Նա Իր աշակերտներուն եկաւ վերնատունը՝ եւ անոնց վրայ փռէց ըսելով, «Առէք Հոգի Սուրբ» (Յովհ. Ի. 22), բայց պատուէր տուաւ անոնց սպասել եւ իրենց պաշտօնին չսկսիլ մինչեւ որ Հոգին իրենց վրայ գար (Ղուկ. ԻԴ. 49: Գ. Առաք. Ա. 8): Պենտէկոստէի օրը Հոգին եկաւ հաւատացեալներու ամբողջ մարմնին վրայ Գ. Առաք. Բ. 1-4: Պենտէկոստէէն յետոյ որքան ատեն որ Աւետարանը միայն հրեաներուն կը քարոզուէր, Հոգին կը շրջանորոշէր հաւատացեալներէն անոնց որոնց վրայ ձեռքեր կը դրուէին (Գ. Առաք. Ը. 17, Թ. 17): Երբ Պետրոս թագաւորութեան դուռը բացաւ հեթանոսներուն (Գ. Առաք. Ժ.) Սուրբ Հոգին առանց յապաղելու կամ հաւատքէ ուրիշ միջոցներու, տրուեցաւ անոնց որ կը հաւատային (Գ. Առաք. Ժ. 44, ԺԱ. 15-18): Այս է տեւական իրողութիւնը եկեղեցւոյ լման շրջանին: Գ. Առաք. Ժ. 44ը Ս. Գրոց մէջ առանցք կազմող համար մըն է: Մինչեւ հոն Աւետարանը միայն հրեաներուն բերուած էր եւ Ս. Հոգին կը թափուէր հաւատացեալ հրեաներու վրայ առաքեալներուն միջնորդութեամբ:

բը: Բայց հոս եկեղեցւոյ շրջանին համար բնական դառնալիք կարգը կը սկսի: Ս. Հոգին կը տրուի առանց միջնորդութեան եւ միայն Յիսուս Քրիստոսի վրայ եղած հաւատքի ի փոխան (Ա. Կոր. 2. 19): Ամէն հաւատացեալ Հոգիէն ծնած է (Յովհ. Գ. 3, 6, Ա. Յովհ. Ե. 11), Հոգին Իր ներսի-դին կը բնակի եւ հաւատացեալին մարմինը տաճար մը կ'ընէ (Ա. Կոր. 2. 19, Հոով. Ը. 9-15, Ա. Յովհ. Բ. 27, Գաղ. Դ. 6), Հոգիով մկրտուած է (Ա. Կոր. ԺԲ. 12, 13, Ա. Յովհ. Բ. 20, 27), աշուպէս կնքելով զայն Աստուծոյ համար (Եփես. Ա. 13, Դ. 30):

3. Նոր Կտակարանը կը զանազանէ Հոգին ունենալը (որ ճշմարիտ է բոլոր հաւատացեալներուն համար) եւ Հոգիով լեցուիլը, որ հաւատացեալին առանձնաշնորհն ու պարտականութիւնն է (բաղդ. Գ. Առաք. Բ. 24 եւ Դ. 29-31, Եփես. Ա. 13, 14 եւ Ե. 18): Մէկ մկրտութիւն, շատ լեցուիլ-նիւր:

4. Ս. Հոգւոյն Յիսուսի հետ առնչութիւնը կը տեսնուի Անոր յղացման մէջ (Մատթ. Ա. 18-20, Ղուկ. Ա. 35), մկրտութեան մէջ (Մատթ. Գ. 16, Մարկ. Ա. 10, Ղուկ. Գ. 22, Յովհ. Ա. 32, 33), կեանքին եւ ծառայութեան մէջ (Ղուկ. Դ. 1, 14), Յարութեան մէջ (Հոով. Ը. 11) եւ իբր Անոր վկան եկեղեցւոյ շրջանին մէջ (Յովհ. ԺԵ. 26, ԺԶ. 8-11, 13, 14):

5. Ս. Հոգին կը կազմէ եկեղեցին (Մատթ. ԺԶ. 18, Եբր. ԺԲ. 23) բոլոր հաւատացեալները Քրիստոսի մարմինը ըլլալու մկրտելով (Ա. Կոր. ԺԲ. 12, 13) այդ մարմինին իւրաքանչիւր անդամին ծառայութեան համար պարզեւներ բաշխելով (Ա. Կոր. ԺԲ. 7-11, 27, 30) անդամները առաջնորդելով իրենց ծառայութեանը մէջ (Ղուկ. Բ. 27, Դ. 1, Գ. Առաք. ԺԶ. 6, 7) եւ Ս. Հոգին Ինքն է այդ ծառայութեան զօրութիւնը (Գ. Առաք. Ա. 8, Բ. 4, Ա. Կոր. Բ. 4):

6. Ս. Հոգին կը բնակի հաւատացեալներու խումբի մը մէջ որոնք կը կազմեն տեղական եկեղեցի մը եւ զանոնք միաբան ընկերակցութեամբ տաճար մը կ'ընէ (Ա. Կոր. Գ. 16, 17):

7. Քրիստոս երբեակ անհատական յարաբերութեան մը վրայ կը խօսի Ս. Հոգիին հաւատացեալին հետ. — «ձեր քով, ձեր մէջ ձեր վրայ» (Յովհ. ԺԴ. 17, Ղուկ. ԻԴ. 49, Գ. Առաք. Ա. 8): «Քով» կը ցուցնէ Աստուծոյ՝ հոգիի մը մօտենալը զայն մեղքի համար յանդիմանելով Յովհ. ԺԶ. 9 Քրիստոսը ներկայացնելով իբր հաւատքի առարկայ (Յովհ. ԺԶ. 14), հաւատք շնորհելով (Եփես. Բ. 8) եւ նոր ծնեցնելով (Յովհ. Դ. 3-16): «Մէջ»

կը նկարագրէ Ս. Հոգիին հաւատացեալին մարմինին մէջ բնակող ներկայութիւնը (Ա. Կոր. 2. 19) մարմինին վրայ յաղթութիւն տալու (Հոով. Ը. 2-4, Գաղ. Ե. 16, 17), քրիստոնէական նկարագիր ստեղծելու (Գաղ. Ե. 22, 23) տկարութիւններուն օգնութեան հասնելու (Հոով. Ը. 26), աղօթք ներշնչելու (Եփես. 2. 18), Հօրը մօտենալու դիտակից այտօնութիւն տալու (Եփես. Բ. 18), հաւատացեալին որդեգրութեանը ներքին վկայութիւնը տալու (Գաղ. Դ. 6), Աստուծոյ խօսքը մեր մաքրուելուն եւ սրբութեանը գործածելու (Եփես. Ե. 26, Բ. Թես. Բ. 13, Ա. Պետ. Ա. 2) մխիթարելու եւ բարեխօսելու (Դ. Առաք. Թ. 31, Հոով. Ը. 26) եւ Քրիստոսը յայտնելու, ճանչցնելու, փառաւորելու (Յովհ. ԺԶ. 14):

Այս հատուածին տակ կարելի է ըսել թէ մինչ Քրիստոսի արիւնը մեր փրկագինն է՝ Ս. Հոգին մեզ փրկող զօրութիւնն է: Հոով. Ա. Է գլուխներուն մէջ Ս. Հոգին միայն մէկ անգամ յիշուած է, (Հոով. Ե. 5): Բայց Ը. գլխուն մէջ 19 անգամներ, եւ կը պատկերացնէ Ս. Հոգին հաւատացեալին «մէջ»: Քրիստոնէական նկարագիրը պարզապէս բարոյական կամ օրինական ուղղափառութիւն (correctness) չէ, հապա տիրանալը եւ յայտնաբերելը, ապրիլը ինը շնորհներուն. — Սէր, խնդութիւն, խաղաղութիւն, (նկարագիր ներքին վիճակի) երկայնմտութիւն, քաղցրութիւն, բարութիւն (նկարագիր մարդոց հետ յարաբերելու մէջ) հաւատարմութիւն, հեղութիւն, ժուժկալութիւն (նկարագիր Աստուծոյ հանդէպ յարաբերելու մէջ) (Գաղ. Ե. 22, 23): Միասնաբար առնուելով այս ինը շնորհները կը ներկայացնեն Քրիստոսի բարոյական պատկերը եւ կարելի է առնել իբր առաքեալին Գաղ. Բ. 20ի բացատրութիւնը, «ոչ թէ ես, հապա Քրիստոս», եւ իբր սահմանում մը Յովհ. ԺԵ. 1-8ի «պտուղ»ին: Այս նկարագիրը կարելի կը զառնայ հաւատացեալին Քրիստոսի հետ կենդանի միութեամբը միայն (Յովհ. ԺԵ. 5, Ա. Կոր. ԺԲ. 12, 13) եւ բոլորովին Հոգիին պտուղն է՝ այն հաւատացեալներուն մէջ, որոնք ինքզինքնին լման կերպով Անոր կը յանձնեն: (Գաղ. Ե. 22-26):

8. Ս. Հոգւոյն ղէմ անապաշխարներուն գործած մեղքերն են՝ հայհոյել (Մատթ. ԺԲ. 31) հակառակ կենալ (Գ. Առաք. Է. 51), նախատել (Եբր. Ժ. 29)

Հաւատացեալներուն Ս. Հոգիին ղէմ գործած մեղքերն են՝ զայն արտմեցնել կեանքին կամ սրտին մէջ Հարութիւն պահելով (Եփես. Դ. 30, 31 եւ զԱյն մարել անհնազանդութեամբ (Ա. Թես.

Ե. 19): Բայց նոր Կտակարանի եւ ոչ մէկ հաւատացեալ որ գիտակից է Ս. Հոգւոյն իր մէջ բնակեցուն խոստման՝ չկրնար Դաւիթի նման աղօթել ըսելով. «Քու Սուրբ Հոգիդ ինձմէ մի հաներ (Սաղ. ԾԵ. 11): Սուրբ Հոգւոյն հանդէպ հաւատացեալին ուղիղ դիրքն է «ինքզինք բոլորովին Անոր իշխանութեան եւ առաջնորդութեան յանձնել ապրելու եւ ծառայելու մէջ, եւ տեւական յօժարութեան մէջ ըլլալ որպէսզի նա վերցընէ ամէն չարութիւններ, եւ ամէն ինչ որ զԱյն կը վշտացնէ եւ կամ Անոր պարտութիւնը կ'արգիլէ (Եփես. Դ. 31):

9. Սուրբ Հոգւոյն օրինակներն են Ս. Գրքին մէջ. — Իւղը (Յովհ. Գ. 34, Եբր. Ա. 9), Ղուրը Յովհ. Է. 38, 39, հովը Գ. Առաք. Բ. 2, Յովհ. Գ. 8, կըրակը Գ. Առաք. Բ. 3, Աղաւնի մը Մատթ. Գ. 16, զրաւ մը Եփես. Ա. 14, կնիք մը Եփես. Ա. 13, Դ. 30: Ս. Գրոց նմանողաբանութեան մէջ կնիք մը կը նշանակէ. —

ա. Կատարուած գործառնութիւն մը Երեմ. ԼԲ. 9, 10 Յովհ. ԺԷ. 4, ԺԹ. 30:

բ. Ստացուածք, կալուածատիրութիւն Երեմ. ԼԲ. 11, 12, Բ. Տիմ. Բ. 19:

գ. Ապահովութիւն Եսթեր Ը. 8, Դան. 9. 17, Եփես. Դ. 30:

ՈՐՉԱՓ ԱՒԵԼԻ... Ղուկ. ԺԱ. 13:

ՊԱՏՄԱԿԱՆ

ՄԵԾ ԴԵՄՔԵՐ ՈՒ ԴԵՊՔԵՐ

ՀԱՅՈՅ ՀԱՒԱՏՈՅ ԸՆՏԱՆԻՔԷՆ

○○○○○ — ○○○○○

ԳՐԻԳՈՐ ԼՐԻՍԱԿՈՐԻԶ

ԱՐՏԱՔԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ ՔՐԻՍՏՈՆԷՈՒԹԵԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ՀԱՄԱՐ(1). —

Առաջին միջոցին՝ եկեղեցիներու շինութեան մասին արդէն զրաժ ենք, ուստի շարունակենք:

2. Քրիստոնէութեան պետականացումը: Տըր-դատ հազիւ բուժուած գալլախաութիւնէ եւ հազիւ լուսոյ կրօնքին դարձած — ապաշխարութեամբ եւ անկեղծ հաւատքով — գայն հռչակեց իբր պաշտօնական կրօնք Հայաստանի (304): Այս դէպքը այնքան կարեւոր ազդեցութիւն ձգեց, որ մեր պատմութեան վրայ եւ այժմ իսկ

այնքան կը զբաղեցնէ միտքերը, որ կ'արժէ քիչ մը յամենալ անոր վրայ:

Նախ պէտք է ըսել թէ եկեղեցին մեծ փաստներու ենթարկուած է քրիստոնէութեան պետական կրօն դառնալուն պատճառաւ: Մինչեւ Գրիգորի վերապէն ելլելը քրիստոնէաները կրակի մէջ փորձուած ընտիր ոսկի էին, — իրենց հաւատքը խոր, յոյսը վառ եւ սէրը զոհաբերող էր, քանզի հալածանքի բովէն անցած էին եւ նոր կրօնն ընդունելով՝ խաչը իրենց ուսին վրայ առած կը հետեւէին Յիսուսի(2): Գրիգորի վերապէն ելլելէն յետոյ դարձի եկողներն ալ նախորդ յոգուածին մէջ պարզուած արթնութեան պատուհներն էին (Տես «Բանբեր» 1937, էջ 124 եւ 140): Ուստի անոնց ալ մեծ ժառանգեւոր կեանք ունէր, թէեւ ոչ նաեւ առաջիններուն խորութիւնը: Բայց պետականացումէն ետքը եկաւ երրորդ տարր մըն ալ, որուն ջախջախիչ մեծամասնութիւնը նոր կրօնն ընդունեց կամ պատուով զգացումէն հրապուրուելով, կամ թապաւորին երկիւղէն մտրակուելով եւ կամ բազմութեան հետեւելով ոչխարային բնազդով: Այդ տարրին մուտքովը եկեղեցին ծանծաղացաւ, իր կորովէն ու հոգեկան խորութիւնէն շատ բան վրայ տուաւ, կորսնցուց իր եռանդն ու նուիրումը:

Ահա՛ պետականացումէն քրիստոնէութեան ստացած խոր վէրքերը: Բայց ատոնց դէմ ունինք մեծ օգուտ մըն ալ: Այդ միջոցաւ էր որ նոր կըրօնը հետզհետէ թափանցեց հայ ժողովուրդին լայն խաւերուն մէջ եւ զանոնք առաւ գէթ իր արտաքին ազդեցութեան տակ: Եթէ քրիստոնէութիւնը Հայաստանի մէջ պաշտօնական կրօն չդարձուէր, անոր տեղը նախ Զրադաշտականու-

(1) Աւելի յարմար կը նկատենք այս վերնագիրը քան թէ նախորդ յոգուածին մէջ տրուածը, — «Գրիգորի գործունէութիւնը»: (Տես «Բանբեր» 1937, էջ 140): Եւ ասոնք արտաքին կը կոչենք, քանզի ներքին եւ էական միջոցներն էին Աստուծոյ խօսքին սերմանումը, ուղղուած ուղիքներ եւ մարտիրոսներու արիւնիք եւ Սուրբ Հոգւոյն ներգործութեամբ Դ. դարուն ծագած արթնութիւնը (Տես «Բանբեր» 1937, էջ 124 եւ 140):

(2) Հայ եկեղեցին իր գոյութիւնը կը պարտի ամենէն աւելի այս տարրին որ ստակաւեւի թիւ մը կը կազմէր եւ տարածուած էր Հայաստանի ամէն կողմը եւ որ Տըր-դատի հալածանքները դադրեցնելէն յետոյ թաքստոցէն հրապարակ եկաւ ու սկսեւ եռանդով աշխատել քրիստոնէութեան տարածման համար:

թիւնը եւ ապա Մուհամետականութիւնը պիտի ըլլար մեր պետական ու ազգային կրօնը, իսկ քրիստոնեաները պիտի մնային փոքրամասնութիւն մը, ենթակայ տեւական արհամարհանքի, ճնշման եւ հալածանքի: Անոնք չպիտի կրնային տոկալ այդ ամենուն երկար ատեն: Հաւանաբար պիտի անհետանային վերջապէս, ինչպէս հզու Պարսկաստանի եւ Հիւսիսային Արաբիոյ մէջ, ուր բաւական թիւով քրիստոնեաներ կային առաջին դարերուն, բայց հետզհետէ շնչուեցան՝ վերոյիշեալ երկու կրօններու ճնշման տակ, քան զի քրիստոնէութիւնը պետականացումով ժողովրդականացած չէր:

Ուստի կը միտինք ընդունիլ — թէ եւ ոչ վրձնաբար թէ քրիստոնէութեան պետականացումէն եկեղեցին աւելի շահած է քան թէ կորսնցուցած, քանզի առանց ատոր՝ քրիստոնէութեան գոյութիւնն իսկ վտանգուած պիտի ըլլար մեր երկրին մէջ եւ հաւանաբար Մուհամմէտի հետեւորդներուն մէջ պիտի գոյուէինք մենք իսկ, որ այսօր կը քննադատենք Գրիգորի ու Տրդատի այս քայլը: Շիտակ է թէ Աստուած շատ միջոցներ ունի իր գործը պաշտպանելու համար, բայց ինչո՞ւ չխորհիլ թէ Ան այդ միջոցը յարմար նկատեց այն ժամանակին եւ վայրին մէջ, երբ եւ ուր կրօնն ու պետութիւնը իրարմէ անջատել անկարելի էր: Ինչո՞ւ չխորհիլ թէ Անիկա ատով հայ կառավարութիւնն ու հայ ժողովուրդը պաշտպան եւ օգնական կարգեց ճշմարիտ քրիստոնեաներուն, որպէսզի անոնք չունչ առնեն, Ս. Գրիգորն ու հոգեւոր գրականութիւնն ունենան իրենց լեզուով եւ աստեղծով լուսաւորուած ու զօրացած՝ դիմադրեն նախ Զրադաշտականութեան եւ ապա Մուհամետականութեան փոթորիկներուն, որոնք քիչ ետք պիտի պայթէին մեր դժբաղդ ազգի զլխուն:

Այսքանը բաւ համարելով այս միջոցի մասին՝ անցնինք միւսներուն:

3. Կրօնական պաշտօնականներու կազմակերպութիւնը: Երբորդ դարու վերջերը Հռոմէական կայսրութեան սահմաններուն քրիստոնեաները ունէին լաւ կազմակերպուած եկեղեցականութիւն մը: Մանաւանդ հալածանքներու միջոցաւ եկեղեցիներու մէջ համայնական զգացումը եւ ներքին կազմակերպութիւնը զօրացած էր(1) եւ հովիւներու հեղինակութիւնը բարձրացած, քանի որ անոնք տառապանքի օրերուն իրենց կեանքի գնով իսկ կը պաշտպանէին իրենց հօտը: «Հաւատացեալներու բազմութենէն գատուած էր կըղերականներու դասակարգ մը: Եպիսկոպոսը —

որ նախապէս երէցներու ժողովին նախագահն էր — դարձաւ եկեղեցւոյն զուխն ու առաջնորդը, դուրսը անոր ներկայացուցիչը, ներսը անոր հոգեւոր հայրը»(2): Քիչ ետքը քաղաքի եպիսկոպոսը աւելի բարձր դիրքի հասաւ, քան թէ գիւղի համայնքինը, որ հետզհետէ խոնարհեցաւ երէցի (քահանայի) աստիճանին: Իսկ քաղաքի եպիսկոպոսներուն մէջ ալ ժամանակի ընթացքին աւելի բարձրացաւ նահանգային մայրաքաղաքի հովիւը, որ կոչուեցաւ մետրոպոլիտ(3)» (արքեպիսկոպոս): Ասոր ենթարկուեցան իր նահանգին բոլոր փոքր քաղաքներու եպիսկոպոսները՝ իրենց առաջնորդութեան տակ զանուոյզ գաւառի բոլոր քահանաներով:

Հաւանաբար նոյնն էր պարագայն նաեւ հռոմէական պետութեան սահմանակից Հայաստանի մէջ. թէ եւ ոչ նոյնքան լաւ կազմակերպուած՝ ան ալ ունէր հոգեւոր պաշտօնականներու նոյն դասաւորումը — սարկաւազ, քահանայ(3) (երէց) եւ եպիսկոպոս, մանաւանդ որ այդ դասաւորումը սկսած էր առաքելական դարուն: Հաւանաբար եպիսկոպոսներէն մին կը ճանչցուէր նոյնիսկ արտասահմանի մէջ իբր վերապետուչ մեր երկրի բոլոր քրիստոնեաներուն, ինչպէս կարելի է եզրակացնել եկեղեցական պատմիչ Եւսիբոսի մէկ խօսքէն («Բանբեր» 1937, էջ 60):

Բայց կ'երեւնայ թէ Տրդատի հալածանաց ատեն եկեղեցականներու մեծամասնութիւնը արդէն նահատակուած էր: Թէ եւ դեռ կար մնացորդ մը եւ եռանդուն գործունէութեան մէջ էր արթնութեան ատեն, բայց անոնք կազմալուծուած էին եւ շատ քիչ, բաւական չէին նոր պահանջներու: Մեծ թուով ու կազմակերպուած եկեղեցականութեան մը պէտքը զգալի էր: Նախ պէտք էր ընտրել հայ եկեղեցւոյն ընդհանուր հովիւը: Ուստի Տրդատ համախորհուրդ իր կնոջ Աշխէնի եւ քրոջ Խոսրովիդուխտի՝ ժողովի հրաւիրեց հայ աւագանին, որ միաձայնութեամբ Գրիգորը ընտրեց այդ պաշտօնին համար: «Այս ընտրողական գործողութիւնը նշանաւոր է այնու, որ մեր ազգային եկեղեցւոյ հնաւանդ օրէնքը կը հաստատուէր»

(1) Տես O. Fager, Geschichte des Altertums, էջ 521-522

(2) F. Oelninger, Geschichte des Christentums, էջ 98:

(3) Ծրանսերէն, անգլ. եւ գերմ. լեզուներուն մէջ քահանայ նշանակող բառը կը ծագի persbyteros (երէց) բառէն:

տէ եւ եկեղեցական պաշտօնէից ընտրութեան մէջ ժողովրդական ձայնին անհրաժեշտութիւնը կ'ապացուցանէ(1):

Սակայն Գրիգոր դեռ աշխարհական քարոզիչ մըն էր: Ուստի Տրդատ զրկեց զայն մեծ շքով — մասնաւոր հրովարտակով եւ ընկերակցութեամբ 16 նախարարներու — Կեսարիա, ուր Ղեւոնդ արքեպիսկոպոս զայն նախ իբր քահանայ եւ ապա իբր եպիսկոպոս ձեռնադրեց:

Անկէ ետք Գրիգոր իրեն հետ առնելով բազմաթիւ կրօնաւորներ, Կապադովկիայէն վերադարձաւ Հայաստան: Հոս անոնց միացան նախ այն եկեղեցականներն ալ, որոնք մեր երկրին մէջ գոյութիւն ունէին — ինչպէս ակնարկեցինք — քրիստոնէութեան թաքուն վիճակի մէջ գտնուած ատեն իսկ: Յետոյ Գրիգոր այս երկու խումբին վրայ աւելցուց նոր մըն ալ՝ ընտրելով նորադարձ քրիստոնեաներէն, զխաւորաբար նախկին քուրմերէն: Անոնք իրենց զարգացումով ու ժողովրդականութեամբ կարեւոր ազդակ մը եղան քրիստոնէութեան արտաքին ազդեցութեան գոյացման, բայց ոչ նաեւ ներքին կեանքին:

Այսպէս՝ կազմակերպուեցաւ Հայաստանի եկեղեցական պաշտօնէութիւնը: Անոր գլուխը կը գտնուէր Գրիգոր Լուսաւորիչ իբր կաթողիկոս՝ իր հովանաւորութեան տակ էին եպիսկոպոսները, որոնք իբր առաջնորդներ՝ իրենց քահանաներու եւ սարկաւազներու օգնութեամբ կը մատակարարէին իրենց յանձնուած գաւառական թեմերու հոգեւոր պէտքերը եւ որոնց թիւն էր «աւելի քան 400», Ազաթանգեղոսի վկայութեան համոձայն: Իսկ քահանաներու եւ սարկաւազներու «բազմութիւնը անթիւ էր»:

Կարեւոր պակաս մըն ալ լեցուած էր ասով: Հայ ժողովուրդը ունեցած էր իր կազմակերպեալ կրօնական պաշտօնէութիւնը, որուն ջանքերով ու գործունէութեամբ լուսոյ կրօնը շուտով պիտի թափանցէր ու արմատանար մեր ազգին մէջ: Վստահ ենք թէ ընտրուած հովիւներու մեծ մասը իր վսեմ կոչմանը գիտակցութեամբն ու ներշնչութեամբ օժտուած անձերէ կը բաղկանար, բայց անոնց մէջ կը գտնուէին նաեւ շատեր, որոնք երեւութով քրիստոնեայ, բայց սրտով անդարձ էին: Մանաւանդ անոնք, որոնք եկած էին նախկին քուրմերէն: Լուսաւորիչ մեծ սխալ մը գործեց հովիւ կարգելով ազգայիններն ալ՝ ամբողջ Հայաստանը ըստ կարելւոյն շատով

ՊԱՏԱՆԵԱՅ

ԱՂՔԱՏ ԵՂԱԻ

ԱՆ ՈՐ ՀԱՐՈՒՍՏ ԷՐ



Ծնունդի նախօրեակն էր: Տժգոյն արեւը իր շեղ ու գաղջ ճառագայթները էրիօ ձորին վրայ կը սփռէր մեղմացնելով օրուան պազութիւնը: Հովիտն ի վեր կը յառաջանար տափերով ու արեկան տղայ մը, որ երկար հիւանդութեան մը հետեւանքով միշտ դեղնած ու մեղմադճոտ էր: Այն օր այտերը կարմրած՝ ու խոշոր կապոյտ աչքերը անսովոր կերպով մը կը փայլէին: Կեանքին մէջ առաջին անգամն էր որ Միքայէլ առանձինն այս ճամբուն վրայ կը գտնուէր: Ի՛նչ լաւ բան՝ ուղածին պէս կանգ առնել, ուղած ատենը վազել, անգամ մը մամուռները դիտել ու հետեւիլ արծաթէ ժապաւէնի նման սահող գետակին: Որքա՛ն ուրախ էր, այլեւս չէր լսեր դաստիարակուհիին հրամանները, «Միքայէլ, պաղ պիտի առնես. Միքայէլ, զգուշացիր որ չի յոգնիս...»: Ա՛հ, որքա՛ն ուրախ էր: Ազատ կերպով ամբողջ թոքերովը ջրին օդը կը ծծէր:

Քրիստոսի լուծին տակ խոնարհեցնելու բազմաւթէն մղուած: Իրաւ է թէ ասով մեղմացաւ ընդդիմութիւնը քրիստոնէութեան դէմ, սակայն եկեղեցին տուժեց իր ներքին կեանքէն:

Շիտակ է թէ եկեղեցւոյ պետականացումէն ետքը այդպիսի սխալ քայլ մը առնել շատ բնական էր, բայց անխոստափելի ալ չէր: Լուսաւորիչը բաւական ազդեցութիւն ունէր՝ համոզելու Տրդատը թէ եկեղեցիի մը առողջութիւնը կախում ունի անոր պաշտօնեաներու առողջութեանէն: Անոնցմէ նոյնիսկ մէկ հատին հիւանդութիւնը կրնայ ամբողջ հօտը վարակել, եթէ շուտով առջեւը չառնուի:

Այս նկատումներով Լուսաւորիչ շատ խիստ բլբլաւ էր իր գործակիցները ընտրելու ատեն: Կերպով մը հետեւելու էր այն ընթացքին, զոր բռնեց Պեարոս Անանիայի եւ Սափիրայի դէմ: Ասով մեր մայրենի եկեղեցւոյ հիմը աւելի առողջ հիմերու վրայ դրած պիտի բլբլար:

(1) Օրմանեան, Ազգապատմութ. Ա. էջ 90

Միքայել, միլիոնատերի մը միակնորդին էր: Իր ծննդեան անթիւն մայրը մեռած էր, իսկ հայրը իր զբաղումներով ու աշխարհի հաճոյքներէն տարուած՝ Փարիզ կը բնակէր: Ուստի Միքայել մնացած էր իր մեծ մօր ու անգլիացի դայեակի մը հսկողութեան տակ, ու կը բնակէր ձրանասայի Արտէշ նահանգին ամենալուսաւ զիրքի մը վրայ կառուցուած հոյակապ գղեակի մը մէջ: Միքայելի հայրը երբեմն երբեմն կարճ այցելութիւններ կ'ընէր իր տղուն, նոյն ատեն բերելով անոր լաւագոյն նուէրները, իսկ Միքայել զայն տեսնելու մեծ իղծ մը չէր զգար, քանի որ իրեն համար հայրը օտար մըն էր ու չէր կրնար լեցնել իր սրտին փափաքը:

Այս Ծնունդի նախօրեակին ալ հայրը Փարիզ մնացած էր, իրեն զրկելով ամենագեղեցիկ կահադանդի նուէրները, որոնց մէջ կային սնտուկներով խաղալիքներ, վերջին նորաձեւութեամբ ելեքտրական երկաթուղիներ, պատկերներ, գիրքեր, տուփերով շօքօլա եւ այլն: Միքայել այս ամենուն վրայ հագիւ թէ ակնարկ մը նետեց, քանի որ արդէն պահարան մը լեցուն ունէր անոնցմէ, որոնք զինք ալլեւ չէին հրապուրեր: Մէկը չունէր որ անոր հետ խաղար, եւ արդէն ուրիշի տալու երջանկութիւնն ալ ճաշակած չէր:

Իր վատառողջութեան համար բժիշկը հրամայած էր լեռնային տեղ բնակեցնել, միտքով շատ չաշխատցնել ու նամանաւանդ բնաւ իր կամքին հակառակ չչարժիլ, ուստի անմիջապէս իր ուզածը կատարուելու էր: Թերեւս կը խորհիք թէ, ուրեմն Միքայել աշխարհի ամենաերջանիկ սղան էր: Ո՛հ, ո՛չ: Մեր պատիկ մեծահարուստը ամենատխուր, մեղամաղձոտ ու միշտ դաժան մէկն էր: Իր սիրտը անձնասէր ու անզգայ էր. ոչ մէկէն կ'ախորժէր եւ ոչ մէկն ալ զինքը կը սիրէր: Խեղճ, թշուառ Միքայել:

Այն օրը որ մեր պատմութիւնը կ'սկսի, իր դաստիարակունիւն հիւանդ էր: Միքայել պատեհութենէն օգուտ քաղելով պատիկ պտոյտի մը համար դուրս ելաւ նախընթրիքի համար վերադառնալու նպատակաւ, բայց անաւասիկ պըտոյտը որ ըրաւ, իր կեանքին մէջ մեծ փոփոխութիւն մը յառաջ բերելու ծառայեց: Ծամբէն գացած ատենը տեսաւ պատիկ հովիւ մը որ իր այծի խումբին հետ կը մազլցէր նեղ քարոտ ճամբայէ մը: Առաջին անգամ չէր որ Միքայել կը տեսնէր այս պատիկ զիւղացիին անցնիլը, որ զրեթէ իր տարեկիցն էր, թէպէտ աւելի զօրաւոր ու հասակաւոր, վարդազոյն դէմքով եւ աչքերը զուարթ ու փայլուն: Մ'ըսէ մը ունեցաւ

անոր մօտենալու ու հետը խօսելու ինչ որ իր դաստիարակունիւնն ներկայութեամբը անկարելի էր: Բայց հիմա որ ինք ազատ էր, չէր ուզեր այս լաւ պատեհութիւնը ձեռքէ փախցնել:

— Ըսէ ինծի, ո՛ւր կ'երթաս այս անասուններով:

— Օ՛հ, մենք բարձրերը, այդ ժայռերուն տակ կ'երթանք. կը տեսնե՞ս, հոն է որ լաւ արօտավայր մը կայ, ըսաւ ձեռքովը ցուցնելով:

— Դուն բախտաւոր ես, ես ալ պիտի ուզէի մազլցիլ այդ տեղը:

— Լաւ, եկուր ինծի հետ, եթէ կ'ուզես, ես քեզի կ'օգնեմ, թէպէտ ճամբան քիչ մը կոշտ է, սակայն վտանգ չկայ:

Ինչ մեծ անակնկալ մը, Միքայել չկրցաւ փորձութեան դէմ դնել, համաձայնեցաւ ընկերոջը ու սկսան քալել եռանդուն խօսակցութիւններով:

— Ինչ է անունդ եւ ո՛ւր կը բնակիս:

— Անունս Յովհաննէս է եւ այս պատիկ զիւղը կը բնակիմ. ձորին միւս կողմի այդ պատիկ ճերմակ տունը կը տեսնե՞ս, մեր ագարակն է, ինծմէ մէկ տարի աւելի մեծ քոյր մը եւ երեք պատիկ եղբայրներ ունիմ, եւ դարձեալ պատիկ քոյր մըն ալ որ նոր ծնած է:

— Որքա՛ն բաղդաւոր ես: Ես Միքայել կը կոչուիմ, ո՛չ եղբայր եւ ոչ ալ քոյր ունիմ, մայրըս շատոնց մեռած է. ես ալ կը նախընտրեմ մեռնիլ քան թէ ապրիլ. թէպէտ շատ մը խաղալիքներ ունիմ, սակայն անոնք զիս չեն զուարճացներ: Դուն ի՞նչ խաղալիքներ ունիս:

— Խաղալի՞ք. ես բան մըն ալ չունիմ. նախ՝ դուն կը խորհիս թէ ես զուարճանալու ժամանակ ունիմ. դարոց երթալու համար ժամ մը պէտք է քալեմ եւ երբ իրիկուան ժամը հինգին կը վերադառնամ, պէտք է փայտ կտտրեմ, ջուր բերեմ, հօրս դաշտէն վերադառնալէն առաջ կեւրակուրը պատրաստեմ, քանի որ մայրս միշտ հիւանդ է, պէտք է որ ես օգնեմ տանը գործերուն: Մինչեւ իրիկուն Յովհաննէս այս ըրէ, Յովհաննէս հոն գնա, այնպէս որ զբօսնելու բնաւ ժամանակ չունիմ:

Այսպէս խօսելով մեր բարեկամները արօտավայրը հասան: Միքայել որքան որ այս կոշտ ճամբաներէն յոգնած ու շնչասպառ եղած էր, տակաւին ինքզինքը երջանիկ կ'զգար ժայռին զազաթը գտնուելուն համար, ուրկէ կրնար ամէն կողմէն գեղեցիկ տեսարաններ դիտել, լեռ, ձոր, եւայլն:

Մինչ այժմը ուրախութեամբ թարմ, հոտա-

ւէտ խոտերը կը կրծէին, Յովհաննէս իր պայուսակէն մեծ՝ կլոր հաճարէ հաց մը հանեց եւ քիչ մըն ալ ալծի չորացած պանիր:

Քանի որ դուն նախընթերքի համար բան մը չունիս, եթէ կ'ուզես, բաժնեք ինչ որ ունիմ ու թարմ կաթ ալ կը կթեմ: Միքայէլ առանց առարկութեան ընդունեց: Տունը որ միշտ իրեն կ'աղաչէին ուտելու ամենալաւ բաները, հոս առանց տրտնջալու սկսաւ խածնել հացը ու խմել թարմ փրփրոտ կաթը:

— Երբէք կեանքիս մէջ այսքան լաւ նախընթերք մը ըրած չեմ, այս բոլոր բաները ինծի տալով շատ բարի էք: Յետոյ հաստ կտորէ մաղախին մէջ աւնարկ մը նետելով, «Պայուսակիդ մէջի գիրքը ի՞նչ գիրք է» հարցուց:

— Օ՛հ, իմ նոր Կտակարանս է, Յիսուսի բոլոր պատմութիւնը կայ, շատ ազոռոր է, դուն նոր Կտակարան չունի՞ս:

— Ո՛չ, ես ինչ ըլլալն ալ չեմ գիտեր, իմ տունըս շատ մը զիրքեր ունիմ, գիտական եւ պատմական բայց ամէնն ալ գիտ կը ձանձրացնեն:

— Լա՛ւ, ես իմ գիրքս քեզի կուտամ, հայրս ինծի ուրիշ մը կուտայ եւ մեծ Ս. Գրքը ալ կայ մեր տունը, որ ամէն առաւօտ մայրիկիս հետ կը կարդանք: Երկուքս միասին հիմա կրնայինք քիչ մը կարդալ, բայց մութը կը կոխէ, պէտք է շուտով վար իջնենք, եթէ ոչ ճամբան չենք կըրնար տեսնել վերջը: Այս գիրքը առ գրպանդ դիր եւ այս իրիկուն կարդա այն տեղը ուր պատկեր մը իբր նշան դրուած է: Շատ գեղեցիկ պատմութիւն մըն է զոր մեզի բացատրեցին կիրակնօրեայ դպրոցին մէջ:

— Կիրակնօրեայ դպրոցը ի՞նչ է:

— Դուն լաւ գիտեմ, այն դպրոցն է, ուր երգ եւ Ս. Գրքի պատմութիւններ կը սորվինք. դուն երբեք գացած չե՞ս:

— Ո՛չ, երկու երեք անգամ Փարիզի մեծ եկեղեցիի մը մէջ պատարագի դացած եմ, բայց հոն մարդ բնաւ բան մը չի հասկնար:

— Լաւ, մտիկ ըրէ, անպատճառ պէտք է որ դուն գալ կիրակի մեզի գաս, որ Ծնունդի տօնը պիտի կատարուի անոնց համար քր չի կրցան Ծնունդի օրը ժողովի երթալ: Հայրս պատմութիւն մը պիտի ընէ, յետոյ Ծնունդի երգեր պիտի երգենք: Պիտի գաս, չէ՞: Ժամը երեքին է: Երբ պզտիկները խճալից ճամբաներէն քայլ առ քայլ վար կ'իջնէին, արեւն ալ արագութեամբ մարը կը մտնէր: Միքայէլ հիմա սկսաւ մտաւորաբար թեան մատնուիլ այնքան ուշադրութեամբ համար: Բայց դղեակը գտնուողներուն հոգը աւելի մեծ

էր քան Միքայէլինը: Սպասուոր սպասուհի ամէն կողմ ցրուեցան իրենց պզտիկ Տէրը փնտռելու: Վերջապէս անոնցմէ մէկը հանդիպեցաւ Միքայէլի մեծ ճամբուն: Վրայ: Տուն հասնելով՝ իր սովորութեան նման անտարբերութեամբ մը մտիկ ըրաւ հարցումներու հեղեղներուն ու յանդիմանութիւններուն որ կ'ուզէին իրեն իր մեծ մայրը եւ դաստիարակուհին: Խոստացաւ անգամ մըն ալ չընել, սակայն բոլոր սրտովը կը փափաքէր անգամ մըն ալ վայելել այդ օրը:

Միքայէլ երբ անկողին մտաւ, հանեց իր նոր բարեկամին տուած նուէրը եւ բանալով նշանակուած էջը, իր աչքին հանդիպեցաւ համար մը որ ստորագծուած էր, «Ամէն ով որ այդ ջուրէն խմէ, նորէն պիտի ծարաւի. բայց ով որ խմէ այն ջուրէն զոր ես անոր պիտի տամ, պիտի ըլլայ անոր ներշնչին ջուրի աղբիւր մը, որ յաւիտենական կեանքի համար կը բղխէ: Տարօրինակ խօսք. ճշմարիտ իմաստը թէպէտ չէր կըրնար հասկնալ, սակայն իր աչքերը յառած կը մնային այդ համարին վրայ որ կարդացած էր և առանց իր գիտակցութեան այս կենաց խօսքերը իր պզտիկ տխուր եւ առանձին մնացած հոգիին կը թափանցէին: Այս իրիկունէն սկսեալ ծարաւ մը սկսաւ զգալ ու մէկու մը որ կրնայ գոհացում տալ իր սրտին: Իր յագնութեանը պատճառաւ առանց ամբողջ դուլիւր կարգալու խորունկ քնոյ մը մէջ ընկղմեցաւ ու այսպէս երազեց: Երկնային լուսով լուսաւորուած լերան մը դազաթը կը գտնուէր, ուր կար սքանչելի ջուրի ակ մը, կը խմէր ու կը խմէր:

Վերջապէս՝ երբ իրեն այնքան սպասած կիրակին եկաւ, Միքայէլ խնդրեց իր մեծ մօրմէն որ զինքը իր նոր բարեկամին Յովհաննէսէնց ազարակը առաջնորդել տայ: Ասիկա ձեր տիկինին համար շատ տարօրինակ առաջարկ մը թուեցաւ, սակայն քանի որ կամքին հակառակ բնաւ կենալու չէին, հրամայեց սենեկապահուհիին որ պզտիկին ընկերանայ եւ կառապանին ալ որ որոշեալ ժամուն զանոնք տանի մինչև ազարակը:

Գիւղացիները փառաւոր կառքի մը զբան առնէն կանգ առնելը տեսնելով, զարմացան, իսկ Յովհաննէս ուրախութեան աղաղակ մը արձակեց զիմաստրելով իր բարեկամը որուն անհամբերութեամբ կ'սպասէր:

Կարմիր, մաքուր քարերով սալաշատտակուած ընդարձակ խոհանոցին մէջ նստարաններ զետեղուած էին, որոնց վրայ արդէն խումբ մը երջանիկ տղաք կիրակնօրեայ հագուստներով տեղաւորուած էին իրենց ծնողներուն հետ: Ասոնք

պարզմտութեամբ կը հիանային եղբիւնին վրայ, որ իր ճիւղերը քանի մը մոմերով զարդարուած կ'երկարէր զէպի ծխնելոյզը: Սեղանին վրայ դրուած էր տունը պատրաստուած խմորեղէններն ու ծառին տակ կար մանուկներու նուէրները: Երգով մը սկսաւ ժողովը: Վերջապէս Յովհաննէսի հայրը սկսաւ իր պարզ լեզուովը պատմել այն հին պատմութիւնը որ միշտ նոր է: Թէ ինչպէս Յիսուս այս փառաց թագաւորը, որուն կը պատկանի հազարաւոր լեռներու վրայ եղած կենդանիները, անթիւ երկնային աստղերը, խոնարհեցաւ մինչեւ որ ծնաւ Խոսրոսի մը մէջ, քանզի պանդոկին մէջ իրեն տեղ չկար:

Միքայէլ բառ առ բառ կը հասկնար: Առաջին անգամ էր որ կը լսէր. իրեն կը թուէր թէ կը տեսնէր այդ պզտիկ պէպէքը, յարդի վրայ պառկած կովերուն եւ այծերուն հետ, եւ կը լսէր երկինքէն եկած հրեշտակներուն հովիւներուն աւետելը գիշեր ատեն. ասոնք բոլորը իր սիրտը կը բաբախէին: Զարմանքով մտիկ կ'ընէր պզտիկներուն գոց սորված համարները եւ երգերը: Կարծես կ'երազէր երբ յանկարծ լսեց քարոզիչին սրտաշարժ կոչը մեծերուն եւ պզտիկներուն.— Միրելի բարեկամներս, թող մեր սիրտերը չնմանին պանդոկին, որ տեղ չկար Յիսուս մանուկին: Ան որ աշխարհի բոլոր միլիոնատէրերէն աւելի հարուստ էր, ինքզինքը աղքատացուց մեզ հարստացնելու այն երկնային մնայուն հարստութեամբը: Պէտք է բանաւք մեր սրտին դռները իրեն տեղ տալու: Քիչ ատենէն նորէն պիտի գոյ, բայց ոչ թէ Բեթլեհէմի մանուկ մը, այլ թագաւոր թագաւորաց: Ի՛նչ մեծ փառք այն ատեն բոլոր անոնց որ հոս աշխարհի վրայ գինք բնդունեցին, ինքն ալ երկնային տանը դռները պիտի բանայ ու ըսէ, «Եկէք իմ Հօրս օրհնածները, աշխարհի սկիզբէն ձեզի համար պատրաստուած թագաւորութիւնը ժառանգեցէք»:

Յովհաննէսի հայրը ազօթքով մը խնդրեց Աստուծոյ բոլոր ունկնդիրներուն հագիններուն փրկութեանը համար ու ժողովը վերջացաւ: Սպասուհին շատոնց կ'ուզէր մեկնած ըլլալ, քանզի այս միջավայրէն չէր ախորժեք, բայց Միքայէլ այնպէս չէր, կ'ուզէր մինչեւ վերջին վայրկեանին մասնակից ըլլալ: Իր պզտիկ սիրտը ծարաւով մը լեցուած էր ու նոր զգացումներով զբաւուած: Անբացատրելի խաղաղութիւնով մը համակուած ժողովին աւելի երկարիլը կը փափաքէր: Կարծես թէ նոր աշխարհ մը փոխադրուած էր:

Նախընթրիքն ալ լմնցաւ. պէտք էր բաժնուիլ. ուրիշներուն նման ձեռքը երկնցոց (հակառակ

(Շար. խմբագրականի)

նորոգելու ենք, ո՛ւր որ վտանգ մը ըլլայ տկարանալու, մեր անդամներուն արգարութեան գործիքներ ըլլալէ դադրելու, հոն մեր նուիրումը վերանորոգուելու է: «Իմ ուխտս ով Փրկիչ Յիսուս, ամէն օր նորոգեմ պիտի»:

Յարատեւելու ենք այս նուիրման մէջ յաղթութիւն տանելով: Մենք անձամբ այդ յաղթութիւնը տեսնելու ենք մեր վրայ եւ անոր վերայ ուրախանալու ենք Աստուծոյ փառք աւելով:

Ամէն օր նաեւ Քրիստոսի շնորհքին տակ մընալով, մեր տկարութեան եւ եղած յաղթութեան վրայ մտածելով որոշ գիտակցութեան պանք թէ Աստուած մեծ գործեր կ'ընայ ընել մեր մէջ, եւ իրականացնենք Անոր ծրագիրները մեր վրայ, առատօրէն քաշելով մեզի ի սպաս դրուած աստուածաբան գորութեանց աղբիւրներէն եւ անոնց Տուիչին առջեւ խոնարհինք միշտ փառք տալով Անոր: Քանզի մենք որքան մեր իսկութիւնը ճանչնանք այնքան աւելի գիտակից պիտի ըլլանք Աստուծոյ մեծութեան եւ Անոր շնորհքին խորութեան, եւ այս գիտակցութիւնը մեզ միշտ խոնարհ պիտի պահէ:

Ի՛նչ գեղեցիկ է Աստուծոյ զաւակներուն այս ազատութիւնը: Այդ ազատութիւնն է որ զմեզ անհունօրէն կ'երջանկացնէ, կը պտղաբերէ, Աստուծոյ այգիին մէջ: Ազատութեան կանչը եւս, եղբայր, Աստուծոյ որդիներուն փառաւոր ազատութեանը: Զգտինք փոթորիկէ եւ փորձութենէ եւ մեղքի քաշքշուքներէ զերծ եղած ազատութեան, ձգելով դիւրաւ պաշարող մեղքէն միշտ պարտութեանց ենթակայ եղող հին մարդը եւ հագնինք նորը, Քրիստոսի առաքինութիւնովը զարդարուած: Այս է մեր կոչումը այս թշուառ աշխարհին մէջ: Ո՛չ թէ մարմինին, մարմնաւորապէս քալենք, այլ Հոգիով ապրինք: Յ. Ն. Ղ.

.....
սենեկապանուհիին (ակնարկին) ընդունւելու համեստ նուէր մը, Ս. Գրային օրացոյց մը եւ նաւին մը:

Երբ վերադարձան, չէր գիտեր ինչպէս պատասխանէր իր մեծ մօր հարցման թէ լաւ ժամանց մը անցուցած էր. քանզի ոչ մէկուն կըրնար բացատրել թէ ինչ պատահած էր իրեն: Կը հասկնար թէ իր մէջ հիմնական փոփոխութիւն մը եղած էր երկինքէն իջած Մանուկին վրայ լսելէն ի վեր: Այն հարուստ թագաւորին որ Փրկիչ ըլլալու համար աղքատացաւ:

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՓԱՐԻԶԻ ՅՈՒՅԱՀԱՆԴԵՍԸ

Հատորներ պէտք են այս ցուցադրութեան բովանդակութիւնը նկարագրելու համար: Ի՞նչ ճշտութիւն:

Սակայն մեր Տէրոջը յայտնութեան սոսկ երկրաւոր սքանչելիքներուն համար նայէ ինչ որ վերակայուած է թէ «Ուրիշ շատ բաներ ալ կան, դորոնք Յիսուս ըրաւ, որոնք եթէ մէկիկ մէկիկ գրուած ըլլային, կարծեմ թէ աշխարհ» ալ բաւական պիտի չըլլար պարունակելու այն գիրքերը որ գրուած ըլլային»: Մարդկային ցուցադրութեանց նայելով մեր Փրկչին գործերը որակի եւ քանակի ի՞նչ անբաղդատելի գերազանցութիւն կը ներկայացնեն: Ալ ո՛ւր մնաց եթէ մէջ բերէինք Յայտնութեան գրքին ճշտութիւնները կամ եթէ կարող ըլլայինք քողագերծել այն անքննելի բաները, որոնց համար Առաքեալը կ'ըսէ — «Մարդու արժան չէ խօսիլ»:

Սակայն, «սառնք (Աւետարանները) գրուեցան, կ'աւելցնէ որբազան պատմիչը, որպէսզի հաւատաք թէ Յիսուսը Քրիստոսն է, Աստուծոյ Որդին, եւ որպէսզի հաւատալով կեանք ունենաք Անոր անունովը» (Յովհ. ԻԱ. 25, Ի. 31):

Աչքառու կէտ մըն է նաև այցելուներու խառնիճաղանճ բազմութիւնը: Ամէն երկրէ ու կլիմայէ, ամէն ազգէ եւ ցեղէ, ամէն դասակարգէ ու տարազէ մարդկային աննախընթաց ու այլազան հոտանք մը կը յորդի դէպի ցուցադրավայր, Էյֆէլի բարձունքէն խմբանկարը դիտողին համար աւելի շահագրգռական ու գմայլելի է միջազգային այդ միաձուլ ամբոխը, քան ցուցադրուած բոլոր նորութիւնները:

Ու ես յիշեցի բաբելական այս ախտաւոր խուժանը գերազանցող փրկեալներու բազմութիւնը, զոր Պատմոսի Տեսնողը կը նկարագրէ, «Ասկէ հտքը տեսայ եւ ահա մեծ բազմութիւն, զոր մէկը չէր կրնար համբել, բոլոր ազգերէն ու ցեղերէն եւ ժողովուրդներէն ու լեզուներէն, որոնք աթոռին առջեւ ու Գառնուկին առջեւ կեցեր էին, ճերմակ հանդերձներ հագած եւ ձեռքերնին արմաւենիներ բռնած. եւ մեծաձայն կ'աղաղակէին ըսելով, Փրկութիւն մեր Աստուծոյն որ աթոռին վրայ կը նստի եւ Գառնուկին... եւ բոլոր հրեշտակները աթոռին բոյորաիքը կ'եցեր էին... եւ իրենց երեսներուն վրայ աթոռին առջեւ

ինկան ու Աստուծոյ երկրպագութիւն ըրին ըսելով, Ամէն...: Ասոնք են մեծ նեղութենէ եկողները, որոնք իրենց հանդերձները լուացին ու զանոնք Գառնուկին արիւնովը ճերմկեցուցին. անոր համար Աստուծոյ աթոռին առջեւ են... այսուհետեւ ոչ պիտի անօթենան ու ոչ ծարաւին... վասնզի Գառնուկը պիտի հովուէ զանոնք... եւ Աստուած բոլոր արցունքները պիտի սրբէ անոնց «չքերէն» Յայտ. Է. 9-17:

Ո՛վ բիւրք բիւրոց ձիւնազգեստ եւ գերերջանիկ բազմութիւն, սիրտս օր առաջ քեզի միանալու մարմաջէն կ'աղաղակէ, «Ո՛հ, թէ ես ալ հոն ըլլայի մէջն այն խումբին...»:

..

Վերջին նօթագրութիւն մըն ալ: Շրջագայութիւննիս կը վերջացնենք: Դուրս կ'ելլենք պարտասած: Շատ բան կար տեսնելիք: Շատ բան տեսանք: Բոլորն ալ գեղեցիկ եւ հետաքրքրաշարժ, ոմանք ալ ապշեցնելու աստիճան գրաւիչ: Տիրական խորհուրդ մը սակայն կը գրաւէ միտքը: Մարգարէին խօսքն է, «Ժողովուրդները պարապ տեղ ու ազգերը կրակի համար պիտի աշխատին ու յոգնին»: Այս բոլորին վրայ իմաստունն ալ իր վճիռը կ'արձակէ, «Ունայնութիւն ունայնութեանց, ամէն բան ունայնութիւն է»: Ու ես կ'ողբամ անոնց վրայ որոնց սիրտը այս ունայնութիւններուն կապուած է: Մե՛ղք: Վասնզի անոնց համար գրուած է, «Ունայնութեան ետեւէ երթալով ունայն եղան, Հաղար մե՛ղք»:

Ու երանի՛, բիւր երանի բոլոր անոնց որոնց սիրտը հաւատքով կապուած է դարերու անխախտ եւ յաւիտեանական Վէմին, Յիսուս Քրիստոսի: Ահա թէ ինչու մարդկային ձեռք բոլոր գործերը, նոյնիսկ ամենահիանալի գեղակերտները դիտելէ վերջ՝ իմ Փրկչիս պէս կ'աղաղակեմ, «Ի՞նչ կը շահի մարդ եթէ բոլոր աշխարհը վաստկի եւ իր անձը կորսնցնէ»: 25° որ ամէնն ալ ունայնութիւններ են: «Բայց մենք երեւցած բաներուն չենք նայիր, հապա չերեւցածներուն, քանզի երեւցած բաները ժամանակաւոր են, բայց չերեւցածները՝ յաւիտեանական»:

Ալ գոհութիւն Աստուծոյ Իր անպատուաւ պարգեւին համար:

ՍԱՄՈՒԷԼ Պ.

Imp. Y. ARMEN & Cie 39 Rue St - Savournin Marseille

Le Gérant: H. N. GHAZAROSSIAN

“ ԱՅՈ ”,

Չափաւոր

ոյ՛ կըլեա «Այո» Գրկէիս իմ, առաջ ա՛ն միշտ էր «ոյ»։ Երբ ինք քուս կը բաղխէր մեզիս եւ

ան հոգ մերժէ ի ինձ։ Բայց հի մայ սիրտս յօժար բացուած լո՛ւծ լատ ան պար բերէ։

Կրկ

Եւ ցըն ծու մեղ Գրէ «Այո», երբ Յի սուս գիւ կանչէ։ Կը սեմ «Այո» Յի

սու սի, «Այո» եւ միշտ «այո»։ Կը գըն՝ ընել սուրբ կամքը եւ Բեզ է միշտ իմ «Այո»։

1. Այլեւս «Այո» Փրկչիս իմ, առաջ ա՛ն միշտ էր «ոյ»։
 Զի երբ դուստ կը բաղխէր մեղմիւ, ես անհոգ մերժէի Իր կոչ
 Բայց հիմա սիրտս յօժար բացուած լա՛յն, ժլատ, անտարբեր չէ
 եւ ցընծումով գոչէ «Այո», երբ Յիսուս գիւ կանչէ։
 Կ'ըսեմ «Այո» Յիսուսի, «Այո» եւ միշտ «Այո»
 Կ'ուզեմ ընել սուրբ կամքը, եւ քեզ է միշտ իմ «Այո»։

2. Կ'ըսեմ, «Այո», Տէրոջս իմ, խոստումն քոնեմ պինդ յար,
 Այլ ուր որ կանչէ եւ ուղղէ գիւ, հետեւիմ սրտով խոնարհ,
 Պիտ՝ ցնծմամբ խոստանամ Վաճնս իմ երբ բան մը պահանջէ
 Լի հաւատքով ըսեմ «Այո», երբ գործերս կ'որոշէ։
 Կ'ըսեմ, «Այո», Յիսուսի, «Այո» եւ միշտ «Այո»,
 Կ'ուզեմ ընել սուրբ կամքը եւ Բեզ է միշտ իմ «Այո»։

3. Կ'ըսեմ, «Այո» Տէրոջս իմ, ունի՞ր զորո՞ւմ մը ինձ Ան,
 Լի յուսով կատարելես կ'երթամ իր պատուէրն ու սր. հրաման
 Իր ձայնին ես կ'ուզեմ ունկընդել, հնազանդիլ օրէ օր,
 Ըսել յօժար կամքով «Այո» հրամաններուդ բոլոր:
 Կ'ըսեմ, «Այո», Յիսուսի, «Այո» եւ միշտ «Այո»,
 Կ'ուզեմ ընել սուրբ կամքըդ եւ Քեզ է միշտ իմ «Այո»:

4. Կ'ըսեմ «Այո», Տէրոջս իմ, թէ տայ կամ թէ առնէ,
 Զի գիտեմ Ինք գիտ բնաւ չթողուր, չէ՞ որ Ինք կեանքիս լոյսն է
 Հետեւիմ Իրեն տիւ եւ գիշեր, քանզի շաւիղս Ինքն է,
 Ու խինդ շեշտով կ'ըսեմ «Այո», երբ ծրագիրն ինձ յայտնէ:
 Կ'ըսեմ, «Այո», Յիսուսի, «Այո» եւ միշտ «Այո»,
 Կ'ուզեմ ընել սուրբ կամքըդ եւ Քեզ է միշտ իմ «Այո»:
 Թարգ. գերմ. Յ. Ն. Ղ.

.....

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այլեւայլ պատճառներով, որոնց ամենամեծը թրքա-
 խօսներու կամաց կամաց նուազումն է, քանի որ անոնք
 հետզհետէ աւելի գիրաւ կրնան հայերէն հասկնալ, որոշե-
 ցինք «Բանբեր»ի թուրքերէն մասը շարունակել մինչեւ
 այս տարուան վախճանը եւ անկէ յետոյ դադարեցնել: Ու-
 րեմն պիտի թելադրենք բոլոր թուրքերէն մասի բաժա-
 նորդներուն որ յառաջիկայ տարուան հաժար անմիջապէս
 Հաւրէն մասը ապաւրեն, որով նորէն «Բանբեր»ի ընտա-
 նիքին մէջ կը մնան եւ նոյնպէս կ'օրհնուին: Վեր. Պար-
 սումեան յետ այսու հայերէն պիտի գրէ «Բանբեր»ի էջե-
 րուն մէջ:

Յառաջիկայ ամսուն «Բանբեր»ի ԺԳ. տարեշրջանը
 կը լրանայ և նոր շրջան մը կը սկսի: Անոնք որ չեն ուզեր
 թերթին բաժանորդագրութիւնը շարունակել, թող հաճին
 մինչեւ Դեկտեմբերի մէջանդերը լուր տալ, ապա թէ ոչ
 իրենց թերթը կը շարունակենք ղրկել իրենց:

Նոր բաժանորդները հիմակունէ կ'արձանագրուին:
 ԽՄԲ. «ԲԱՆԲԵՐ»Ի

Վերջին անգամ ըլլալով կ'ուզենք յիշեցնել Օրացոյ-
 ցին համար թէ բոլորովին սպառելու վրայ է ու հազիւ 50
 հոգիի բաւարարութիւն կրնանք տալ. հետեւաբար ճարի
 փափաքողը պէտք է փութայ իր ապագրանքը ընելու: